ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևան 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ՄԱՆԻՖԵՍՏԸ 2

1. Անվտանգությունը՝ որպես խաղաղության հիմք 3

2. Արդյունավետ արտաքին քաղաքականություն 6

3. Բանիմաց պետական կառավարում 8

4. Արդարադատություն 9

5. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում 10

6. Գիտությունն ու կրթությունը՝ պետության անվտանգության և զարգացման հիմք 12

Գիտությունը՝ որպես ռազմավարական առաջնահերթություն 12

Կրթություն 13

Հանրակրթական համակարգի կառավարման եվ կազմակերպման սկզբունքներ 16

7. Կայուն առաջընթաց նոր տնտեսության, գիտության և մարդկային կապիտալի զարգացման միջոցով 20

8. Առաջադեմ տնտեսական քաղաքականություն 23

Գիտություն, տեխնոլոգիա և սփյուռքի ներուժ 30

Նոր հարկային համակարգի ռազմավարական լուծում 31

Թվային արժույթի հայեցակարգ 33

9. Գյուղատնտեսություն 33

10. Ընտանիք և սոցիալական պաշտպանություն 34

11. Աշխատաշուկայի զարգացման նոր մոտեցում 36

12. Ավագ սերունդ և աջակցության կարիք ունեցող խմբեր 37

13. Որակյալ և հասանելի առողջապահական համակարգ 38

14. Մշակույթ և ազգային ինքնություն 41

15. Հայաստան – Սփյուռք համագործակցության վերաիմաստավորում 43

16. Շրջակա միջավայր և բնական ռեսուրսների պաշտպանություն 44

17. Սպորտ և առողջ հասարակություն 46

ՄԵՐ ՄԱՆԻՖԵՍՏԸ

Ազգային պետություն

Կառուցելու ենք ինքնիշխան Հայաստան, որտեղ անվտանգությունը, տնտեսությունը և քաղաքական որոշումները կախված չեն արտաքին թելադրանքից, այլ կայացվում են արդար պայմաններում, հիմնված են սեփական ուժի, հայկականության, գիտելիքի և միասնականության վրա:

Խաղաղություն՝ հիմնված սեփական կարողությունների և արդարության վրա

Ապահովելու ենք կայուն խաղաղություն՝ ոչ թե զիջումների և վախի, այլ բոլորի համար արդար պայմանների և հզոր պաշտպանական կարողությունների՝ համախմբված հասարակության և միջազգային իրավունքի միջոցով:

Պետություն, որն արդար է և ծառայում է քաղաքացուն

Ստեղծելու ենք արդար և հաշվետու պետություն, որտեղ իրավունքը գերակա է, և իշխանությունը՝ ենթակա օրենքին, պաշտոն ունենալը ծառայություն է, իսկ քաղաքացու արժանապատվությունը՝ անսակարկելի արժեք:

Անվտանգություն՝ գիտելիքով և տեխնոլոգիայով

Կառուցելու ենք ժամանակակից անվտանգության համակարգ, որտեղ պաշտպանությունը ստեղծվում է սեփական գիտական ներուժով, ռազմարդյունաբերությամբ, իրավագիտակից և պատրաստված քաղաքացի ունենալով:

Աշխատանք բոլորի համար

Փոխելու ենք սոցիալական պետության տրամաբանությունը՝ նպաստից դեպի ինքնաբավություն, կայուն աշխատանք, ընտանիք կազմելու և ապագա պլանավորելու իրական հնարավորություն:

Գիտահեն և արտահանող տնտեսություն

Վերափոխելու ենք տնտեսությունը սպառումից դեպի արտադրություն, գիտահեն արդյունաբերություն և բարձր ավելացված արժեք ունեցող արտահանում:

Մարդկային կապիտալը՝ որպես ազգային հարստություն

Պահպանելու ենք և զարգացնելու ենք տաղանդը Հայաստանում՝ կրթության, գիտության, նորարարության և արդար աշխատաշուկայի միջոցով:

Կրթություն՝ պետության անվտանգության և առաջընթացի հիմք

Ստեղծելու ենք կրթական համակարգ, որը ձևավորում է կրթված և կարողություններ ունեցող, ինքնուրույն կյանքի հմտություններով օժտված, վստահ, ազատ մտածող քաղաքացի՝ ազգային ինքնությամբ և գլոբալ մրցունակությամբ:

Արդյունավետ և ինքնուրույն արտաքին քաղաքականություն

Վարելու ենք կանխատեսելի և ինքնուրույն, բացառապես Հայաստանի շահերի և նրա քաղաքացիների իրավունքների պաշտպանության վրա հիմնված արտաքին քաղաքականություն՝ ոչ ընդդեմ որևէ մեկի, այլ հանուն Հայաստանի ու հայ ժողովրդի շահերի:

Հայաստան–Սփյուռք՝ «համատեղ պետություն»

Վերահիմաստավորելու ենք Հայաստան–Սփյուռք հարաբերությունները՝ բարեգործությունից դեպի համատեղ կառավարում, ներդրում և պատասխանատվություն: Հայաստանը տուն է աշխարհի բոլոր հայերի համար, իսկ աշխարհի հայերը զգալու են Հայաստանն իրենց մեջքին:

1. Անվտանգությունը՝ որպես խաղաղության հիմք

Հայաստանը կունենա ամուր, ինքնաբավ, ժամանակակից և արդյունավետ համակարգ, որը ծառայում է ոչ թե մշտական լարվածությանը, այլ երաշխավորված խաղաղությանը և պետության ամբողջական ու համապարփակ անվտանգությանը, անհրաժեշտ զսպման կարողություններ ձևավորելուն:

Անվտանգության ամուր համակարգ չի կարող գոյություն ունենալ առանց զսպման լիարժեք կարողություններով օժտված ժամանակակից բանակի և ռազմարդյունաբերության:

Ըստ այդմ, առաջնային են հետևյալ քայլերը՝

ՀՀ վարչապետին առընթեր Ռազմական բարեփոխումների հանձնաժողով: Հանձնաժողովը վեց ամսվա ընթացքում կմշակի համապարփակ ռազմավարական ծրագիր, որի իրականացումը կսկսվի անմիջապես: Հանձնաժողովը կունենա ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողության գործառույթ:

Հստակ ժամկետներ և հաշվետվողականություն

Հանձնաժողովի մշակած ծրագրի հիման վրա կապահովվի՝

— զսպման լիարժեք կարողություններ մեր պաշտոնավարման առաջին տարվա ավարտին,

— ռազմական հավասարակշռություն մեր պաշտոնավարման առաջին ժամկետի ավարտին:

Պետական ներդրումներ անվտանգության համակարգում

Մինչև հանձնաժողովի կողմից ծրագրի ներկայացումը օրենքի մակարդակով կամրագրվի, որ պաշտպանության ծախսերը չեն կարող ՀՆԱ-ի 8 տոկոսից ցածր լինել:

Սա նշանակում է՝ մեր պաշտոնավարման առաջին տարվան հաջորդող պետական բյուջեով ռազմական ծախսերն առնվազն մեկ միլիարդ ԱՄՆ դոլարով ավելի կլինեն՝ համեմատ այսօրվա ծախսերի հետ:

Պաշտպանական ծախսերից տարեկան կես միլիարդ ԱՄՆ դոլար պարտադիր կուղղվի հայաստանյան ընկերություններից գնումների համար՝ արագացնելու համար մեր ներքին ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը:

Համապարփակ անվտանգություն

Անվտանգությունն ընդհանուր պատասխանատվություն է, որը կրում են Կառավարությունը, բանակը, մասնավոր հատվածը (դեղորայք, վառելիք և այլն), ՀԿ-ները, քաղաքացիները՝ յուրաքանչյուրն իր դերին համապատասխան: Երկիրը մշտապես պատրաստ է պաշտպանության և այդ հարցում հաջողելու է, որովհետև բոլորը՝ պետությունը, հասարակությունը և տնտեսությունը, գործում են՝ որպես մեկ համադրված համակարգ: Ենթակառուցվածքներն

(օրինակ՝ էներգետիկա) անմիջապես սկսում են ծառայել երկրի պաշտպանությանը:

Ճգնաժամային իրավիճակում կարճ ժամանակում ապահովվում է, որպեսզի 600,000 հազար մարդ գործի հանուն երկրի պաշտպանության՝ այդ խնդրի համար համախմբվելով առավելագույնը 72 ժամում:

Ճշմարտություն և պատասխանատվություն

Անմիջապես կհանրայնացվի 2020 թվականի 44-օրյա պատերազմի վերաբերյալ հանձնաժողովի զեկույցը, որը գործող իշխանությունը հրաժարվում է հրապարակել, ինչից կարելի է միայն եզրակացնել, որ այն փորձում է թաքցնել սեփական ձախողումները: Կհանրայնացվի նաև 2016 թվականի քառօրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի զեկույցը:

Հասարակությունն ունի այս հարցերի պատասխանները ստանալու իրավունք և դա կապահովվի:

«Խելացի» սահմաններ և թվային պաշտպանություն, ժամանակակից բանակ

Պաշտպանական և անվտանգության ոլորտում կիրառական հետազոտությունների և նորարական տեխնոլոգիաների ներդրման համար ֆինանսավորման կրկնապատկում:

Կգործի «ավտոմատ հայտնաբերում → իրական ժամանակում ազդանշան → արագ արձագանք» եռաշերտ բանաձև: Մեր պաշտոնավարման ժամկետի ավարտին կունենանք «խելացի» սահմաններ ու թվային պաշտպանություն՝ ավտոմատացված պատնեշով և մարդու անմիջական ներգրավման նվազեցումով:

Մոբիլ զինված ուժեր՝ հագեցած ժամանակակից տեխնոլոգիաներով և տեղերում կամ կոնկրետ իրավիճակներում որոշումների ակնթարթային կայացման և դրանց կատարման կարողություն ունեցող անձնակազմերով:

Կներդրվի բանակում մարդկային ռեսուրսների կառավարման նոր համակարգ՝ կրթության և մասնագիտական աճի հստակ ուղիներով:

Մենք կշարունակենք և կընդլայնենք ռազմական համագործակցությունը արևելքի և արևմուտքի երկրների, այդ թվում՝ Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ:

Անվտանգությունը պահանջում է ՀՀ պետական սահմանների ինտեգրված ժամանակակից կառավարում՝ սահմանապահ զորքերի կողմից վերահսկողության, մաքսային հսկողության և բուսասանիտարական հսկողության հուսալի համակարգերով:

Մեր գերխնդիրն է ռազմարդյունաբերությունը տեխնոլոգիական ինքնիշխանության առանցքային հենասյուն դարձնելը: Տասնամյակի ընթացքում տեղական արտադրության մասնաբաժինը ռազմարդյունաբերության ընդհանուր ծավալում կհասնի առնվազն 50 տոկոսի՝ հիմնվելով գիտահետազոտական ներուժի ընդլայնման վրա:

Մենք կառուցում ենք պետություն, որտեղ պաշտպանությունը ստեղծվում է սեփական մտքով ու արտադրությամբ, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի գիտի իր դերը ճգնաժամի պահին, իսկ յուրաքանչյուր որոշում կայացվում է օրենքի, պատասխանատվության և հանրային վստահության հիման վրա:

2. Արդյունավետ արտաքին քաղաքականություն

Հայաստանի կենսունակությունն ապահովող, երկրի շահերից բխող, արտաքին ճնշումներից զերծ, հաշվետու արտաքին քաղաքականությունը լինելու է մեր առանցքային խնդիրներից:

Ներսում թույլ Հայաստանը, չի կարող ազդեցություն ունենալ արտաքին աշխարհում, ուստի, ուժեղանալով ներսում, մենք կամրապնդեք մեր միջազգային դերը: Արտաքին քաղաքականությունը ուղղված է լինելու ՀՀ Սահմանադրությունից բխող այնպիսի պայմանների ապահովմանը, որոնք կնպատեն Հայաստանի քաղաքացիների խաղաղ և ստեղծարար նկրտումների լիարժեք իրականացմանը, ազատ ձեռներեցությանը, մարդու իրավունքների և անհատական ազատությունների հարգմանը, ազգային արժեքների առաջմղմանը և մշակութային ժառանգության պաշտպանությանը:

Մենք մերժելու ենք մեզ պարտադրվող կամ թելադրվող օրակարգերը՝ այլ կերտելու ենք մեր սեփականը՝ բայցև օգատգործելով միջազգային գործիքակազմերը և փոխգործակցությունը, այդ թվում համաշխարհային հիմնահարցերի լուծման գործում:

Մեր արտաքին քաղաքականությունը լինելու է մի կուռ համակարգ, որը նպաստելու է ժամանակակից և արագ փոփոխվող աշխարհում Հայաստանի և տարածաշրջանում անվտանգության ամրապնդմանը և գլոբալ համակարգերում Հայաստանի ուրույն դերակատարության ամրագրմանը: Հայաստանը պետք է կառուցի փոխշահավետ հարաբերություններ բոլոր շահագրգիռ գործընկերների հետ՝ միասնաբար բազմազան անվտանգային ռիսկերի նվազեցման և կառավարման նպատակով:

Տարածաշրջանում արժանապատիվ խաղաղության հաստատումը երաշխիքն է հանդիսանալու ամուր կայունության և բանակցված ու ոչ թե պարտադրված անվտանգային ճարտարապետության հաստատմանը: Այդ նպատակով մենք պատրաստ ենք ներգրավվել և կառուցողական երկխոսություն ծավալել տարածաշրջանային բոլոր երկրների, միջազգային այլ գործընկերների և դերակատարների հետ:

Հայաստանը կողմնակից է տարածաշրջանային տրանսպորտային ուղիների բացմանը և բազմազանեցմանը: Մենք բարձր ենք գնահատում այդ հարցում ԱՄՆ վարչակազմի TRIPP նախաձեռնությունը, ինչպես նաև այլ միջազգային գործընկերների, ներառյալ ԵՄ ու Ռուսաստանի համապատասխան հանձնառությունները: Դրա հետ մեկտեղ մենք ջանալու ենք լավարկել այդ ծրագիրը, այն մտայնությամբ, որ դա նախևառաջ օգուտ բերի Հայաստանի քաղաքացիներին՝ երաշխավորելով երկրի ինքնիշխանությունը և սահմանների անքակտելիությունը, ապահովելով երկրի ներսում և արտաքին աշխարհի հետ անխափան, ապահով և անվտանգ հաղորդակցությունը, արտաքին առևտրի համար ավելի նպաստավոր պայմանների տեղծումը:

Մենք կլինենք հետևողական և ակտիվ միջազգային դատական և կոնվենցիոն բոլոր մեխանիզմների կիրառման հարցում՝ Հայաստանի և Արցախի մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանության համար՝ Արդարադատության

միջազգային դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հատուկ առաջնահերթությամբ: Ազատելու ենք Հայաստանի ինքնիշխան տարածքներն ադրբեջանական օկուպացիայից: Գերիների, անհայտ կորածների, ինչպես նաև զոհված հերոսների ընտանիքների իրավունքների միջազգային պաշտպանությունը լինելու է մեր առաջնահերթությունը: Միջազգային ատյաններից Հայաստանի ներկայացրած հայցերից, գանգատներից կամ դիմումներից հրաժարվելը, առանց հիմնարար իրավունքների խատումներն արձանագրելու և հատուցում տրամադրելու, բացառվում է. դա կստեղծի նոր սպառնալիքներ թե՛ մարդու իրավունքներին, թե՛ պետականությանը: Վերականգնելու ենք Հայոց ցեղասպանության ճանաչման առաջմղմանն ուղղված քայլերը:

3. Բանիմաց պետական կառավարում

Մենք կստեղծենք հանրային կառավարման համակարգ, որտեղ հանրային պաշտոնները հասանելի են միայն փորձառու, գիտելիք և նվիրում ունեցող մասնագետներին, հաշվետվողականությունը և թափանցիկությունը երաշխավորված են թվային տեխնոլոգիաների միջոցով, իրավունքի գերակայությունը և դատարանների անկախությունը աներկբա ապահովված է:

Էապես կվերափոխվի կայուն մեծամասնություն ձևավորող ընտրական համակարգը, որը դարձել է գործող իշխանության վերարատադրության գործիք: Ընտրողների ձայները չեն փոշիանալու: Յուրաքանչյուր ընտրողի ձայն պետք է լսելի լինի՝ այդ թվում «բոլորին դեմ» արտահայտվելու միջոցով: Կուսակցությունների՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման մեխանիզմի ամբողջական վերանայում: Կնվազեցվի կուսակցությունների՝ Ազգային ժողով անցողիկության շեմը: Կուժեղացվի հանրային իշխանության մարմինների կողմից Ազգային ժողովին տրվող հաշվետվողականության մեխանիզմը:

Կվերափոխվի Հանրապետության նախագահի ինստիտուտը՝ վերականգնելու համար նրա հակակշիռ դերը և բացառելու համար նրա փաստացի վերածվելը գործադիր իշխանության կցորդի: Կընդլայնվի Նախագահի լիազորությունների շրջանակը բարձրագույն մարմիններում անդամներ նշանակելու, օրենքների

ընդունման մեխանիզմի և այլ հարցերում: Հանրապետության նախագահը պետք է ընտրվի ուղղակի քվեարկությամբ՝ ՀՀ քաղաքացիների կողմից:

Կապահովվի կառավարման հավասարակշռություն և հանրային լայն մասնակցություն: Գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունները կդառնան ինքնուրույն՝ միմյանց նկատմամբ իրավական թափանցիկ վերահսկողության մեխանիզմներով:

Հայաստանը պետք է ունենա իրական հակակոռուպցիոն համակարգ, որի հիմքում կլինեն թվային տեխնոլոգիաների վրա հիմնված ընթացակարգեր ու մարմիններ, ինչպես նաև հանրային արդյունավետ վերահսկողություն:

4. Արդարադատություն

Հայաստանում պետք է անվերապահ կիրառություն ունենա իրավունքի գերակայությունը: Իրավական պետությունն է ի զորու ապահովել անվտանգության ամուր համակարգ, զարգացող տնտեսություն, պատասխանատու պետություն և պաշտպանված քաղաքացի:

Ապահովելու ենք դատական իշխանության իրական անկախություն: Յուրաքանչյուրը պետք է իմանա, որ յուրաքանչյուր խնդիր ենթակա է անկախ ու անաչառ դատարանի կողմից, լսված լինելու ու արդար վերաբերմունքի: Դատարանները կունենան լիարժեք անկախություն իշխանության ցանկացած մարմնից ու պաշտոնատար անձից, գործարարից, կազմակերպությունից կամ այլ անձից, քաղաքական որևէ ուժից:

Կվերացվի գործադիր իշխանության, մասնավորապես՝ Արդարադատության նախարարի միջնորդությամբ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու արատավոր երեւույթը: Կբացառվի Բարձրագույն դատական խորհրդի կազմում կամ Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների դատավորների պաշտոններում գործադիր կամ օրենսդիր իշխանության հետ անձնական (ազգակցական, խնամիական և այլ կապեր) առնչություն ունեցող որևէ ածնի ընտրությունը: Կստեղծվի այդ կապերը ստուգող և վեր հանող հատուկ իրավական մեխանիզմ: Դատավորների եւ դատական ծառայողների թվաքանակը առնվազն պետք է համարժեք լինի միջին եվրոպականին՝

այդ կերպ կկրճատվեն գործերի քննության ժամկետները միջինում՝ 50%-ով: Դատարանների աշխատակազմերում կհասնենք բարեվարքության ու մասնագիտական որակավորման բարձր աստիճանի՝ ապահովելով առողջ ու արժանապատիվ մթնոլորտ:

Հիմնարար կվերափոխվեն էլեկտրոնային արդարադատությունը, տեղեկատվության ճիշտ եւ արդյունավետ փոխանակումը ինչպես տարբեր ատյանի դատարանների, այնպես էլ դատարանների եւ պետական կառավարման այլ մարմինների միջեւ: Կամբողջացվի և վերջնական ավարտին կհասցվի գործերի արխիվացման նոր համակարգը: Կապահովենք անվճար ու հասանելի իրավաբանական օգնություն՝ ուժեղացնելով հանրային պաշտպանի ինստիտուտը:

Կբացառվի իրավապահ մարմինների և քրեական հետապնդման համակարգի օգտագործումը քաղաքական նկատառումներով կամ ինչ-որ անձանց անձնական շահերի համար: Իրավապահ մարմիններն ու նրանց ծառայողները դուրս կբերվեն քաղաքական իշխանության ազդեցությունից: Այսօր ստեղծված է արատավոր շղթա՝ նախկինի «կաշառք է վերցնում՝ տուն է պահում» արդարացմանը փոխարինելու է եկել «ռեպրեսիաների է մասնակից դառնում՝ տուն է պահում» արդարացումը: Սա պետք է վերացվի: Իրավապահ համակարգի աշխատակիցները չեն լինելու «վարկերի կամ պարգևավճարների գերի»:

5. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում

Տեղական ինքնակառավարման համակարգը պետք է իրապես նպաստի համայնքի բնակիչների շահերից բխող եւ համայնքային նշանակության հարցերի լուծմանը: Համայնքների խոշորացումները չպետք է լինեն մեխանիկական կամ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով (օրինակ՝ Վաղարշապատի ավագանու ընտրություններից առաջ Խոյ համայնքի միացումը Վաղարշապատին):

Մինչև **2030 թվականը** Հայաստանը կձևավորի **արդյունավետ, ապակենտրոնացված և զարգացմանն ուղղված տարածքային կառավարման համակարգ**, որտեղ տեղական ինքնակառավարումը և պետությունը կգործեն որպես միասնական գործընկերներ՝ ապահովելով հավասարակշռված տարածքային զարգացում, տեղական տնտեսական աճ և համայնքների ինքնաբավություն:

Տեղական ինքնակառավարումը կբարելավվի հստակ քայլերով.

● Ապահովելու ենք **տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի ինստիտուցիոնալ համագործակցությունը՝** հստակ բաժանելով վերահսկողության և զարգացման գործառույթները:

● **Անցում ենք կատարելու տարածքային կառավարման մարմինների վարչական և վերահսկողական գործառույթներից դեպի տարածքային զարգացման գործառույթներ՝** շեշտը դնելով տնտեսական, սոցիալական և մարդկային կապիտալի զարգացման վրա:

● Մինչև 2029 թվականը **արմատապես վերափոխելու ենք մարզպետի աշխատակազմերի առնվազն 50%-ի կառուցվածքն ու բովանդակությունը՝** դրանք դարձնելով ռեգիոնալ և համայնքային զարգացման ծրագրերի ձևակերպման, համակարգման և աջակցության կենտրոններ:

● Իրականացնելու ենք **լիազորությունների ապակենտրոնացում՝** ընդլայնելով համայնքների ինքնուրույնությունը տնտեսական զարգացման, ծառայությունների կազմակերպման և ներդրումային քաղաքականության հարցերում:

● Ներդնելու ենք **արդյունքահեն ֆինանսավորում՝** որտեղ մինչեւ 2028 թվականը պետական սուբվենցիաներն ու աջակցությունը կկապվեն համայնքների զարգացման ծրագրերի իրական ազդեցության և տնտեսական ակտիվության աճի հետ: Մինչև 2028 թվականը ներդրվելու է արդյունքահեն ֆինանսավորման մեխանիզմ, որով առնվազն 70% պետական սուբվենցիաների և աջակցությունների հոսքեր կապահովվեն համայնքներ:

● Խթանելու ենք **միջհամայնքային համագործակցությունը և ռեգիոնալ զարգացման ծրագրերը**, հատկապես ենթակառուցվածքների, աշխատաշուկայի և ծառայությունների համատեղ կազմակերպման ուղղությամբ:

6. Գիտությունն ու կրթությունը՝ պետության անվտանգության և զարգացման հիմք

Գիտությունը՝ որպես ռազմավարական առաջնահերթություն

Պետության առաջխաղացման եւ Հայ ժողովրդի հավաքական իդեալի իրագործման առանցքը գիտությունն է: Գիտական հենքով կզարգացվի մեր պետության կենսագործունեության ցանկացած ոլորտ՝ անվտանգություն, պետական կառավարում, թվային տեխնոլոգիաներ, տնտեսություն (գյուղատնտեսություն), առողջապահություն, սոցիալական ապահովություն, կրթություն, շրջակա միջավայր, մշակույթ:

Վերջին երեսնամյակում գիտությունն անտեսվել է բոլոր կառավարող ուժերի կողմից՝ տեղը զիջելով կարճաժամկետ, իսկ հաճախ նաեւ իրավիճակային իրողություններին ու ծրագրերին: Արդյունքում՝ տարեցտարի կրճատվել է գիտության ոլորտում ներգրավված անձանց քանակը՝ 2022 թվականի դրությամբ կազմելով շուրջ 3,600 գրանցված գիտական աշխատող, ինչը Հայաստանի Հանրապետության 1,000 բնակչի հաշվարկով միջինում 1,22 հոգի է կազմում: Համեմատության համար այս նույն ցուցանիշը ԵՄ երկրներում 4,81 է, իսկ ՏԶՀԿ-ում՝ 4,82: Գիտական աշխատանքով զբաղվողների թվի էական նվազումը նկատվում է նաև վերջին տարիներին գիտական աստիճան ստացածների ընդհանուր թվի մասով:

Էականորեն կրճատվել է ՀՆԱ-ի հարբերակցությամբ գիտության ուղղությամբ իրականացվող ծախսը: **Մենք երաշխավորում ենք, որ գիտությամբ զբաղվելը կլինի պատվաբեր և շահավետ.** գիտական աշխատանքում ընդգրկվածների թիվը առնվազն կկրկնապատվի, իսկ գիտության պետական ֆինանսավորումը կհասնի ՀՆԱ-ի առնազն 1,5 %-ի:

Պետական իշխանության իրագործումը կլինի այնպես, որ յուրաքնաչյուր ոք իր ապրած կյանքի որակի փոփոխությունից զգա այն ազդեցությունը, որը մեզ տալու է գիտությունն ու գիտելիքահեն կառավարումը: Գիտությամբ զինված եւ լուսավորյալ անհատն է, որ դառնալու է հայկական պետականության անվտանգության եւ հայ ժողովրդի բարեկեցության երաշխավորը:

Կրթություն

Մենք Կրթական համակարգում ձևավորելու ենք ամուր ազգային ինքնություն՝ որպես հայոց ազգային պետության հարատև գոյության, միասնականության և խաղաղության հիմք:

Ստեղծելու ենք ժամանակակից, ներառական և համընդհանուր հասանելի կրթական համակարգ, որտեղ դպրոցն ու համալսարանը ձևավորում են **գիտակից, ինքնաճանաչ քաղաքացի, մրցունակ մասնագետ և ստեղծարար միտք:**

Դպրոցում կրթությունը պետք է կազմակերպվի այնպես, որ սովորողն ինքը կարողանա կառուցել բուհ և մեծ կյանք տանող իր ճանապարհը: Բուհ ընդունվելը չպետք է կախված լինի ծնողի ֆինանսական վիճակից և կրկնուսույցի մոտ երեխային նախապատրաստելու հնարավորությունից:

Համընդհանուր և համաչափ հասանելի կրթություն: Միջնակարգ կրթության հասանելիությունը կհասնի 100%-ի, սահմանամերձ և գյուղական շրջաններում դպրոցները բաց կմնան՝ ապահովելով աջակցության կարիք ունեցող խմբերի լիարժեք ընդգրկումը: Նախադպրոցական կրթության ծածկույթը կհասցնենք առնվազն 95%-ի: Պետությունը կսուբսիդավորի համայքներին մանկապարտեզի ծառայության համար գանձվող տեղական վճարների մասով: Բարձրագույն կրթությունում կրթաթոշակների ծավալը կաճի՝ առաջնահերթություն տալով ռազմավարական մասնագիտություններին (STEM, մանկավարժություն, գյուղատնտեսություն): ՀՀ քաղաքացիների համար բարձրագույն կրթությունը ՀՀ պետական բուհերում կլինի անվճար:

Գյուղական, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում մանկավարժների պակասը կհաղթահարվի թիրախային խթաններով, ներառյալ հավելյալ վարձատրություն, կեցության ծախսերի փոխհատուցում և արտոնյալ վարկավորման գործիքներ՝ մինչև զրոյական տոկոսադրույքով հիփոթեք և սպառողական վարկեր՝ կրթական կադրերի կայուն ներգրավումն ու պահպանումն ապահովելու համար: Մանկավարժական մասնագիտությունների ուղղությամբ բուհեր ընդունված արական սեռի երիտասարդները բուհում սովորելու և գյուղական դպրոցում աշխատելու ժամանակահատվածում զինվորական պարտադիր ծառայությունից տարկետման

հնարավորություն կստանան, եթե բուհը ավարտելուց հետո գործուղվեն սահմանամերձ կամ բարձր լեռնային գյուղական բնակավայրեր որպես համապատասխան առարկայի ուսուցիչ աշխատելու կամ մանկավարժական այլ աշխատանք կատարելու նպատակով:

Մարդկային կապիտալի զարգացում և կարիերայի վաղ կողմնորոշում: Դպրոցները կանցնեն միջազգային լավագույն փորձին համահունչ ժամանակակից կրթական չափորոշիչների՝ ապահովելով մրցունակ գիտելիք և հմտություններ, միաժամանակ կրթության առանցքում պահելով ազգային ինքնությունը՝ հայոց լեզվի, պատմության և մշակույթի խորացված ու արժեքահեն ուսուցմամբ:

Միջնակարգ կրթության կառուցվածքը կվերանայվի՝ ներդնելով 9+2+1 մոդելը, որտեղ հիմնական դպրոցից հետո ավագ դպրոցի պարտադիր փուլը կլինի երկու տարի, իսկ վերջին տարին՝ ընտրովի և ուղղված բուհական կրթության ինտեգրված ծրագրերին կամ միջին մասնագիտական համապատասխան որակավորում ստանալուն՝ ապահովելով միջնակարգ կրթությունից բարձրագույն կրթության սահուն անցում կամ որևէ մասնագիտության ձեռքբերում : **Բարձրագույն կրթությունը կզարգանա կլաստերային մոդելով՝** խթանելով հետազոտությունը, գիտահեն նորարարությունը և համագործակցությունը տվյալ արդյունեբերական գոտու տնտեսության զարգացման կարիքներին համահունչ:

Պետական բուհերի ողջամիտ խոշորացման քաղաքականության արդյունքում կունենանք բուհական առնվազն երեք մեծ կլաստեր՝ կենտրոնական (Երևան, այդ թվում՝ Ակադեմիական քաղաքը) որպես ազգային գիտահետազոտական կառավարման կենտրոն, հյուսիսային (առնվազն՝ Վանաձոր և Գյումրի) կրթական և տեխնոլոգիական կենտրոն և հարավային՝ (Գորիս ու Կապան) ռազմավարական կրթական հենակետ: Երևանում կենտրոնական ակադեմիական կլաստերը գործելու է արդեն իսկ առկա բուհական համակարգի, ճարտարապետության, ենթակառուցվածքի հենքով՝ դրան հավելելով ճարտարապետական նոր լուծումներ, ներառելով կանաչ գոտիներ, ժամանակակից տեխնոլոգիական հնարավորություններ և այլ ռեսուրսներ:

Հայաստանում բարձրագույն կրթությունը պետք է դառնա ավելի որակյալ, մատչելի, ավելի արդիական: **ՀՀ քաղաքացիների համար ՀՀ պետական բուհերում կրթությունը կլինի անվճար:**

Մասնավոր ԲՈՒՀ-երի համար կներդրվի ուսումնական վարձերի և սովորողի ապրելու ծախսերի վճարման համար վարկերի ճկուն համակարգ այն ուսանողների համար, որոնք սովորում են վճարովի ծրագրերով կամ մասնավոր բուհերում: Սովորողները ստիպված չեն լինի վճարել վարկերը սովորելու ընթացքում: Բեռը չի ընկնի նաև ծնողների վրա:

Առաջնահերթ կլինեն պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մասնագիտությունների շրջանակը և դրանք հասանելի կդառնան պետական բուհերում սովորող ՀՀ քաղաքացիների համար: **Մասնավորապես՝ բոլոր պետական բուհերում մանկավարժական, գյուղատնտեսական, ֆիզիկամաթեմատիկական և կենսաքիմիական համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնառությունը կլինի ամբողջովին պետական պատվերի հաշվին**: Ավելին՝ ուսանողների ուսումնառության արդյունավետությունը կխրախուսվի ճկուն և խելամիտ կրթաթոշակային հնարավորություններով:

Անհրաժեշտ ենք համարում բուհեր-աշխատաշուկա ուղիղ կապի ու փոխհամագործակցության ապահովումը. դրանով պետք է զբաղվեն ոչ միայն բուհերն ու տնտեսվարողները, այլ նաև պետությունը: Բուհերը պարտավոր են թողարկել որակյալ կադրեր, իսկ աշխատաշուկան՝ ապահովել մրցակցության հավասար պայմաններով, նախնական աշխատանքային փորձ ձեռք բերելու հնարավորություններով, մասնագիտական գիտելիքների և կարողությունների ներդրման և արժանավայել վարձատրության բոլոր պայմաններով: Ավելին՝ պետությունը պետք է ապահովի մասնագետների պետպատվեր, այն մշտապես ընդլայնի. բուհերում սովորողների զգալի մասը պետք է ունենա պետության կողմից երաշխավորված աշխատատեղեր պետական կառավարման և այլ ենթակառուցվածքային համակարգերում:

Հանրակրթական համակարգի կառավարման եվ կազմակերպման սկզբունքներ

Մենք ձգտում ենք ունենալ ազգային և իրավական պետություն, հետևաբար դպրոցը պետք է ***ձևավորի*** ազգի և պետության խնդիրներով մտահոգ, դրանց լուծմանը նպաստող օրինապաշտ, իր իրավունքներն ու պարտականությունը լավ գիտակցվող, այլոց իրավունքները հարգող քաղաքացի: Իսկ եթե մեր տեսլականն է նաև Հայաստանի՝ բարձր տեխնոլոգիական երկիր լինելը, ապա դպրոցը պետք է լինի ***պատրաստի*** վերլուծող միտք և քննադատական մտածողություն ունեցող անհատներ և քաղաքացիներ:

Հանրակրթության համակարգի կենտրոնում պետք է լինեն սովորողն ու ուսուցիչը՝ իրենց առանձնահատուկ ունակություններով, հնարավորություններով և կարիքներով: Ուսուցչի հեղինակությունը, օրինակելի կերպարը, դերակատարումը հասարակության մեջ պետք է վերականգնվի, պաշտպանվի, խթանվի պետության և հասարակության կողմից, և սա մեր կարևորագույն նպատակներից է:

Մեզ համար մերժելի է «խնդիր կրողներին վերացնելը վերացնում է խնդիրը» մոտեցումը:

Խնդիրները պետք է արդյունավետ լուծումներ ստանան: Այս նպատակի իրականացման համար Հայաստանի դպրոցները պետք է դառնան մրցունակ՝ համապատասխանելով քաղաքակիրթ աշխարհի համար ընդունեի՝շենքային ու ժամանակակից պահանջներով հագեցած դպրոց համարվելու պահանջներին: Անհրաժեշտ է, որ փոքր բնակավայրերի դպրոցական ենթակառուցվածքները շարունակեն ծառայել համայնքի կրթամշակութային, երիտասարդական, ինչպես նաև համայնքային այլ կարիքներին:

Պետությունը պարտավոր է **ապահովել անվճար միջնակարգ կրթություն՝ անկախ նրանից ծնողը պետական, թե ոչ պետական դպրոց է ընտրել իր երեխայի կրթությունն ապահովելու համար:** Եթե ծնողն ընտրել է ոչ պետական ուսումնական հաստատություն, պետական դպրոցում տվյալ տարիքի սովորողի տարեկան միջինացված ծախսի չափով պետությունը հատուցելու է ոչ պետական դպրոցում սովորող ՀՀ քաղաքացի երեխայի ուսման վարձի ծախսը:

Ապագա մանկավարժի պատրաստումն առանցքային կարևորություն ունի. մանկավարժական մայր ԲՈՒՀը, ինչպես նաև պատմականորեն մանկավարժական լավ դպրոց ունեցող մյուս ուսումնական հաստատությունները, օրինակ՝ Շիրակի պետական համալսարանը, Վանաձորի կամ Գորիսի պետական համալսարանները, մանկավարժների պատրաստման մասնագիտական կրթական ծրագրերը զարգացնելու լուրջ հնարավորություններ կստատան: Մանկավարժական կրթությունը կունենա հետազոտական էական բաղադրիչ՝ հնարավորություն տալով ուսանողին առավել խորքային պատկերացում ունենալ մանկավաժական գիտության, իրենց ընտրած մասնագիտական բնագավառի, ինչպես նաև տարատեսակ հասարակական երևույթների մասին: Երիտասարդների շրջանում մանկավարժական մասնագիտության առաջխաղացման ու գրավչության բարձրացմանը կնպաստեն նաև մասնագիտական կողմնորոշման ծրագրերն ու միջոցառումները՝ հատկապես գյուղական բնակավայրերի դպրոցների ավագ դասարանների սովորողների շրջանում իրականացվող: Պետությունն իր վրա կվերցնի այդ երիտասարդների մասնագիտական պատրաստումն ու կայացումը, նրանց կապահովի համապատասխան աշխատանքով իր բնակավայրի դպրոցում: Սա իր հերթին կնպաստի, որ երիտասարդները մնան գյուղում, իրենց անձնական և մասնագիտական հեռանկարները կապեն իրենց բնակավայրի հետ:

Վերջ է տրվելու ուսուցչի՝ կամավոր ատեստավորման արդյունքում աշխատանքը կորցնելու արատավոր պրակտիկային:

Մեր համոզմունքն է, որ կրթության վրա պետական ծախսը չի կարող պակաս լինել ՀՆԱ-ի 3. 5 %-ից, ինչը կամրագրվի օրենքով: Ավելին՝ կարճաժամկետ հեռանկարում՝ մինչև 3 տարի, այն հասցնելու ենք **առնվազն 4 %-ի, միջնաժամկետում՝ 3-5 տարի՝ 4,5 %-ի, երկարաժամկետում՝ 5-10 տարի՝ 5-6 %-ի**[1]: Սա նշանակում է, որ **5-10 տարվա ընթացում կրթության բնագավառին հատկացվող պետական միջոցները գրեթե կրկնապատկվելու են**:

[1] Վերջին 5 տարիներին ՀՆԱ- կրթության ծախս հարաբերակցությունը միջինում 2.4-2.5 % է, միայն 2024թ.ին է, որ այն հասնում է 3 %-ի՝ հիմնականում մեծածավալ կապիտալ շինարարության հաշվին: Միայն 2024թ-ին 92 մլդ. դրամ է հատկացվել այս ուղղությամբ: Մինչդեռ միջազգայնորեն ընդունված զարգացում ապահովող ՀՆԱ vs. կրթության ծախս ցուցանիշը 4.5-6 % է: ՀՆԱ vs. կրթության ծախս ցուցանիշով ՀՀ-ն զիջում է տարածաշրջանում, ինչպես ավելի լայն եվրոպական տարածքի բնակչություն vs. տարածք համադրելի բոլոր

Հանրակրթության կառավարումն իրականացվելու է ապակենտրոն կառավարման համակարգի հիման վրա: Սա ենթադրում է, որ գործադիր իշխանությունն ու վերջինիս ենթակա մարմիներն ու կազմակերպությունները բացառապես զբաղվելու են կրթական քաղաքականության մշակմամբ, մեթոդական աջակցությամբ, որակի և համապատասխանության վերահսկողությամբ:

Համայնքային մակարդակում քաղաքականության իրականացումը կապահովվի համայնքների եւ դպրոցական տարածքային խորհուրդների միջոցով, որոնք պատասխանատու կլինեն դպրոցի բյուջեի և զարգացման ծրագրի հաստատման, դրա կատարողականի վերահսկման, վարչական հսկողության և համակարգման, դպրոցի վարչատնտեսական բլոկի աշխատանքների ապահովման, ինչպես նաեւ հանրակրթությունից դուրս մնացած կամ դուրս մնալու ռիսկում գտնվող սովորողների հայտանաբերման և հանրակրթություն վերադարձնելու համար: Դպրոցական մակարդակում տնօրենը և ներդպրոցական համապատասխան մարմինները՝ մանկավարժական խորհուրդ, ծնողական և աշակերտական խորհուրդ, ինչպես նաև աջակցող ծառայությունները պարտավոր կլինեն իրականացնել պետական ծրագրերը, ապահովել սահմանված վերջնարդյունքները, իրականացնել խորհրդի կողմից հաստատված դպրոցի զարգացման ծրագիրը և այլն:

Ազգային կրթության առաջնային տիրույթը հանրակրությունն է, սակայն էական կարևորություն ունի նաև արտադպրոցական և առհասարակ **ոչ ֆորմալ կրթական** հնարավորությունների զարգացումը, երիտասարդների դրական զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումն ու դրանց շարունակական բարելավումը՝ երիտասարդության ներուժը երկրի կրթամշակութային, տնտեսական, հասարակական, քաղաքացիական ու քաղաքական կյանքում կարևորոգույն գործոն դարձնելու նպատակով: Կրթական այսօրինակ քաղաքականությունն ուղղված է **ազգային արժանապատվությունը, պետական և ազգային շահը կարևորող երիտասարդի ու քաղաքացու կերտմանը՝ այն քաղացու,** ով քաջ տիրապետում է իր ազգային ճշմարտություններին, ինքնությանն ու պատմական հիշողությանը, ում չեն կարող

պետություններին, այնպես էլ նրանց, որոնց մեկ անձին բաժին ընկնող ՀՆԱ-ն մեզնից քիչ է՝ Մոլդովա, Ալբանիա, Ադրբեջան:

ստիպել դրանք մոռանալ, փոխարենը՝ վերցնել ուրիշների, այդ թվում՝ հակառակորդների ճշմարտությունները:

Կզարգացվի նաև մասնագիտացված դպրոցների ցանցը՝ առաջնահերթություն տալով ռազմավարական կարևորություն ունեցող մասնագիտություններով կրթական հնարավորություններին, այդ թվում՝ մշակույթի և արվեստների, սպորտի և առողջ ապրելակերպի, ռազմական, անվտանգային և քաղաքացիական պաշտպանության, ֆիզիկամաթեմատիկական, ճարտարագիտական և տեխնոլոգիական ուղղություններով:

Մեր բարեփոխումների արդյունքում դպրոցը դարձնելու ենք հզոր մեկնարկի օջախ, այդ նպատակով իրականացնելու ենք.

- **Կառավարման բալանսավարում և անցում դեպի ժամանակակից չափորոշիչներ:** Հանրակրթության ոլորտի կառավարումը հստակ բալանսավորված կլինի: Ոլորտի քաղաքականության մշակումը, դրա իրականացման վերահսկողությունն ու որակի ապահովումը կիրականացվի ազգային մակարդակում: Մինչդեռ ուսումնական հաստատությունների անմիջական կառավարումը կվերապահվի ՏԻՄ-ին, ինչպես նաև համապատասխան տարածքային խորհուրդներին: Միևնույն ժամանակ, ազգային ինքնությունն ու պատասխանատու քաղաքացու ձևավորումը մնում է համակարգի առանցքում. հայոց լեզվի, պատմության և մշակույթի խորացված ուսուցումը դառնում է կրթության հենասյուն:
- **Մարդկային կապիտալի զարգացում վաղ տարիքից:** Դպրոցական կրթությունը պետք է կենտրոնանա ոչ միայն գիտելիքների փոխանցման, այլև ստեղծագործ մտածողության, նախաձեռնողականության, խնդիրների լուծման, թիմային աշխատանքի, հաղորդակցական հմտությունների, հուզական ինտելեկտի և հոգեբանական դիմակայության զարգացման վրա: Սա կապահովի, որ երիտասարները առավել պատրաստ լինեն գլոբալ մարտահրավերներին և ազգային խնդիրներին:
- **ԲՏՃՄ (STEM) և նորարարական կրթության առաջնահերթություն:** Կրթական ծրագրերը կապահովեն ԲՏՃՄ/STEM առարկաների (բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա)

խորացված ուսուցում: Աշակերտները կունենան հնարավորություն կիրառելու գիտելիքները արդիական լաբորատորիաներում, տեխնոլոգիական նախագծերում և թիմային հետազոտություններում, ինչը կդառնա ուսումնական գործընթացի անբաժանելի մասը :

7. Կայուն առաջընթաց նոր տնտեսության, գիտության և մարդկային կապիտալի զարգացման միջոցով

Մենք կստեղծենք **համակարգված, գիտահեն և արտահանող տնտեսություն**, որտեղ արտադրությունը, նորարարությունն ու մարդկային կապիտալը կդառնան **Հայաստանի ազգային հարստություն և երկարաժամկետ մրցակցային առավելություն**:

«Միասնության թևեր» կուսակցությունը հստակ ընտրություն է կատարում. մենք ապահովում ենք պետական ինքնիշխանություն արժեքների, գիտության, նորարարության և ստեղծագործ տնտեսության միջոցով:

Մենք հիմվում ենք գիտելիքի ուժի վրա, որովհետև ժամանակակից աշխարհում **իրական անկախությունը ձևավորվում է այնտեղ, որտեղ ստեղծվում է արժեք, տեխնոլոգիա և միտք:**

Տնտեսության կառուցվածքային վերափոխում

Փոխելու ենք տնտեսության մոդելը սպառումից դեպի **արտադրություն ու արտահանում՝** բարձրարժեք, գիտահեն արտադրանքով:

Ստեղծելու ենք արդյունաբերական գոտիներ՝ տեխնոլոգիական, էներգետիկ, լոգիստիկ ենթակառուցվածքներով՝ տարբեր մարզերում մասնագիտացված ոլորտներով (Սյունիք՝ էներգետիկ համակարգեր, Վայոց ձոր/Գեղարքունիք՝ ագրոտեխնոլոգիա, Երևան/Կոտայք՝ էլեկտրոնիկա և բարձր տեխնոլոգիաներ և այլն):

Արտադրությունը ինտեգրելու ենք գլոբալ շղթաներին՝ բարձրացնելով արտահանման մասնաբաժինը, տնտեսության ինքնիշխանությունը և միջազգային մրցունակությունը:

Նոր հարկային, ֆինանսական և թվային համակարգեր

Կավելացնենք արտադրությունը և արտահանումը խթանող հարկային գործիքները՝ ԵՄ և արևելյան շուկաներին ինտեգրվելու համար: Մենք ապահովելու ենք անցում անուղղակի հարկերից դեպի ուղղակի:

Արժեթղթերի շուկայի ոլորտը կդարձնենք արդիական՝ կապիտալի ազատ շրջանառություն, ներդրումային վստահություն, երկարաժամկետ կանխատեսելիություն ապահովելու համար:

Կներդնենք **թվային դրամ**, որպես պետական վճարումների և ֆինանսական համակարգի թափանցիկության ապահովման, կոռուպցիայի նվազեցման և տնտեսության թվայնացման շարժիչ ուժ:

Մենք ձգտում ենք իրական արդյունքների.

- ՀՆԱ-ում գիտահեն և բարձր տեխնոլոգիական ոլորտների բաժինը կհասնի առնվազն 25–30%-ի,
- կստեղծվի նվազագույնը **100,000** բարձր որակավորում պահանջող աշխատատեղ գիտության, ինժեներական և տեխնոլոգիական արտադրության ոլորտներում,
- արտահանումների կառուցվածքում բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների և ծառայությունների մասնաբաժինը կգերազանցի **50%**-ը՝ ապահովելով Հայաստանի տնտեսական աճը, միջազգային մրցունակությունը և տեխնոլոգիական ինքնիշխանությունը՝ որպես ազգային անվտանգության առանցքային բաղադրիչ:

Գիտության ֆինանսավորման համակարգային վերափոխում

Պետական գիտական ֆինանսավորումը կկառուցվի ամբողջական շղթայով՝ հիմնարար գիտությունից մինչև շուկայական պատրաստ տեխնոլոգիա:

Մինչև 2028 թվականը ֆինանսավորման մինչև 60%-ը կուղղվի կիրառական հետազոտություններին, ինդուստրիալ փորձարկումներին և տեխնոլոգիական

արտադրանքի զարգացմանը՝ ապահովելով գիտելիքի իրական փոխակերպումը տնտեսական արժեքի:

Բարձր տեխնոլոգիական արտադրության և արտահանման արագացում

Մինչև 2030 թվականը բարձր տեխնոլոգիական և գիտահեն արտադրանքի բաժինը արտահանման կառուցվածքում կավելանա առնվազն կրկնակի: Առաջնահերթ զարգանալու են միկրոէլեկտրոնիկան, նյութագիտությունը, ճշգրիտ մեքենաշինությունը, կենսատեխնոլոգիան, դեղագործությունը, էներգետիկ և պաշտպանական տեխնոլոգիաները՝ որպես նոր արտահանող մոդելի հիմք:

Մարդկային կապիտալի պահպանում և զարգացում

Մեր երկրի տնտեսական աճին ուղղակիորեն խոչընդոտող երևույթ է տարածքային անհամաչափ զարգացումը: Տարածքներում առկա և տնտեսական շրջանառությունից դուրս մնացած ներուժը պետք է ներառվի մեր տնտեսական ծրագրերում:

- Երիտասարդ գիտնականների, ինժեներների և արհեստական բանականության մասնագետների համար կստեղծվեն «առաջին տեխնոլոգիական աշխատատեղ» ծրագրեր, նպատակային կրթաթոշակներ և հետազոտական հնարավորություններ:
- Մինչև 2028 թվականը բարձր տեխնոլոգիական ոլորտներում զբաղվածությունը կաճի առնվազն 15%-ով, իսկ մասնագիտական արտահոսքը կնվազի առնվազն 30%-ով:

Նպաստավոր հարկային միջավայր հետազոտության և նորարարության համար

2027 թվականից կգործարկվեն հատուկ հարկային ռեժիմներ հետազոտության և զարգացման ծրագրերի համար, մասնավորապես՝ արհեստական բանականության, պաշտպանական տեխնոլոգիաների, միկրոէլեկտրոնիկայի և ներստեղադրված համակարգերի ոլորտներում:

Արհեստական բանականության հենքով տեխնոլոգիաների զարգացման և պաշտպանական ուղղվածություն ունեցող կիրառական հետազոտությունների համար կսահմանվի.

- շահութահարկի նվազեցում՝ մինչև **0–5%** առաջին 5 տարիների ընթացքում,
- հետազոտողների աշխատավարձերի սոցիալական վճարների **մասնակի փոխհատուցում**,
- արագացված ամորտիզացիա լաբորատոր, հաշվարկային և ինժեներական սարքավորումների համար:

Սփյուռքի գիտական ներուժի ինստիտուցիոնալ ներգրավում
Մինչև 2028 թվականը կստեղծվեն **առնվազն 10 համատեղ հետազոտական լաբորատորիաներ կամ ծրագրային հարթակներ** սփյուռքահայ գիտնականների և ինժեներների մասնակցությամբ:
Մեր նպատակն է ապահովել տարեկան **առնվազն 300 մասնագետի** կարճաժամկետ կամ համատեղ ներգրավում Հայաստանի գիտական և տեխնոլոգիական նախագծերում՝ գիտելիքի փոխանցումը դարձնելով ինստիտուցիոնալ և շարունակական գործընթաց:

8. Առաջադեմ տնտեսական քաղաքականություն

Հայաստանի տնտեսական նոր քաղաքականության հիմքում այն համոզմունքն է, որ փոքր տնտեսության ներքին շուկան չի կարող ապահովել երկարաժամկետ աճի հեռանկար, իսկ զարգացման միակ կենսունակ ուղին արտահանելի, մրցունակ և տեխնոլոգիական տնտեսության ձևավորումն է: Տնտեսական մոդելը պետք է անցում կատարի սպառման մոդելից դեպի արտադրություն ու արտահանում, որտեղ արժեքը ստեղծվում է ոչ թե ներմուծմամբ, այլ գիտելիքով, տեխնոլոգիայով և արդյունաբերական վերամշակմամբ:

Մեր տնտեսական քաղաքականության հիմքում ընկած կլինի կայուն մակրոտնտեսական քաղաքականությունը, որն առնվազն կպահպանի գնաճի չափավոր մակարդակը, ազգային արժույթի կայուն փոխարժեքն ու պետական բյուջեի հավասարակշռվածությունը, ինչպես նաև կիրագործի բիզնեսի և ներդրումային միջավայրի բարելավումներ՝ բյուրոկրատիայի նվազեցման և բիզնեսի իրավական պաշտպանության բարձրացմանն ուղղված բարեփոխումների միջոցով:

Մենք կիրագործենք «Փոքր պետության» հայեցակարգը: Այն Հայաստանում պետք է դառնա ոչ թե գոյության բացատրություն, այլ զարգացման հիմք՝ ձևավորելով այնպիսի տնտեսական համակարգ, որը շարժվելու է ոչ թե գոյատևման, այլ՝ ինքնուրույն մրցակցային առաջընթացի տրամաբանությամբ: Մասնավորապես, մենք մեր մրցակցային առավելությունը կձևավորենք ոչ թե տարածքի կամ բնակչության հիմքով, այլ կարողությամբ՝ տնտեսապես արդյունավետ կառավարվող ոլորտներ, բարձր տեխնոլոգիաներ, ինժեներական լուծումներ, ճկուն և հաշվարկված տնտեսական քաղաքականություն:

Անհրաժեշտ է այնպիսի մոդել, որը թեև ճանաչում է պետության տարածքի սահմանափակումները, հաշվի է նստում դրանց հետ, բայց դրանք վեր է ածում հնարավորությունների: Այս ամբողջության առանցքում մարդկային կապիտալն է՝ STEM (գիտություն, տեխնոլոգիա, ինժեներիա և մաթեմատիկա) կրթություն, ինժեներական մասնագիտություններ, գիտություն–արտադրություն կապ, տաղանդների բացահայտում և առաջխաղացում, աշխատուժի վերապատրաստում և «ուղեղների ներհոսք»:

Նոր տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները

Մեր տնտեսության երկարաժամկետ աճի համար անհրաժեշտ է արդյունաբերության կառուցվածքային փոփոխություն՝ հումքային արտահանումից անցում դեպի պատրաստի, բարձրարժեք արտադրանք: Դրա համար կձևավորվեն արդյունաբերական գոտիներ, կլաստերներ, տեխնոլոգիական ենթակառուցվածքներ և մաքուր էներգիայով աշխատող արտադրական միջավայրեր՝ ապահովելով տնտեսական ինտեգրում գլոբալ արժեքային շղթաներին:

Մեր երկրի տնտեսական աճին ուղղակիորեն խոչընդոտող երևույթ է տարածքային **անհամաչափ** զարգացումը: Տարածքներում առկա և տնտեսական շրջանառությունից **դուրս մնացած ներուժը պետք** է **ներառվի** մեր տնտեսական ծրագրերում: Սա նաև թղթակցվում է անվտանգային, մարդկային կապիտալի զարգացման ուղղությունների հետ:

Տեխնոլոգիական և գիտահեն զարգացումը կդառնա նոր մոդելի հիմք: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը կանցնի ծառայություններից դեպի

ինժեներական ու արտադրական լուծումների, կզարգանա կենսատեխնոլոգիան, ֆինտեխը, պաշտպանական և տիեզերական տեխնոլոգիաները:

Գյուղատնտեսությունն ու գյուղմթերքի արտադրությունը կվերածվեն գիտելիքահեն ոլորտի: Կիրականացվի մեր երկրի հողային ֆոնդի գույքագրում՝ գյուղատնտեսության զարգացման նպատակով գյուղատնտեսական հողերի կոնսոլիդացիայի ռազմավարություն իրականացնելու նպատակով: Գյուղատնտեսությունը կդառնա արտահանման շղթայի բաղկացուցիչ, այլ ոչ միայն սոցիալական ոլորտ՝ արդյունավետ կառավարմամբ, տեխնոլոգիական լուծումներով և բարձրարժեք արտադրանքի արտադրությամբ:

Նոր տնտեսական մոդելը անհնար է առանց հարկային ճարտարապետության վերաձևման: Այս առումով անցում կկատարվի անուղղակի հարկերից դեպի ուղղակի հարկեր, բաժնետիրական ընկերությունների համար կներդրվի շահութահարկի պարտավորության կատարման նոր մոդել. բաժնետիրական ընկերությունները շահութահարկ կվճարեն միայն այն պահին, երբ շահույթը բաշխվում է որպես դիվիդենտ:

Կիրականացվի շրջանառության հարկի և ԱԱՀ-ի աստիճանական փոխարինում պարզ, կանխատեսելի և նվազ՝ 5 տոկոս դրույքաչափով վաճառքի հարկով, կներդրվի շահութահարկի և եկամտահարկի՝ առավելագույնս համաչափպրոգրեսիվ հարկման համակարգեր, կիրականացվի ՓՄՁ–ի հասցեական աջակցություն, իսկ արդյունաբերական գոտիներում՝ պարզեցված և գրեթե զրոյական հարկում: Հարկային համակարգը կդառնա արտադրության ու ներդրումների խթանիչ, և ոչ թե՝ սպառմանը նպաստող:

Արդյունքում՝ կձևավորվի այնպիսի տնտեսական մոդել, որտեղ արտադրությունը կդառնա ինքնիշխանության հիմք, արտահանումը՝ հարստություն, տեխնոլոգիան՝ մրցակցային առավելություն, իսկ ամրապնդված ինստիտուտները՝ երկարաժամկետ զարգացման պայման: Այս ճանապարհով Հայաստանը կվերածվի արտադրող և շուկա ձևավորող երկրի:

Միջազգային լոգիստիկ համագործակցություն և ենթահամակարգեր

Հայաստանի տրանսպորտային ռազմավարությունը կկառուցվի երեք փոխկապակցված նախագծերի վրա՝ այժմ կառուցվող «Հյուսիս–Հարավ»

ավտոմայրուղու, երկարաժամկետ կոնսերվացված «Հյուսիս–Հարավ» երկաթգծի և «Արևելք–Արևմուտք» հաղորդակցական հայեցակարգով առաջարկվող ծրագրի: Այս երեք ուղղությունները միասին ձևավորում են այն շրջանակը, որի մեջ Հայաստանը կարող է դառնալ ինչպես միջազգային լոգիստիկ տրանզիտ՝ այնպես էլ ինքնիշխան, բազմաբևեռ և կառավելի հաղորդակցական հարթակ:

Ներկայումս կառուցվող «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղին Հայաստանում կստանձնի արևմտյան ճյուղի առանցքային դերակատարումը, քանի որ այն ըստ էության ապահովում է լիարժեք սուվերեն վերահսկողություն, կապում է Հայաստանը Իրանին և Պարսից ծովին, Վրաստանին և Սև ծովին:

«Հյուսիս–Հարավ» երկաթգիծը առանձնանում է որպես տեխնիկապես իրագործելի, բայց ծայրահեղ բարձրարժեք նախագիծ, որը նախագծվել է Գագարին–Գեղարքունիք–Վայոց ձոր –Սյունիք–Մեղրի–Ագարակ առանցքով՝ առաջարկելով շուրջ 300 կիլոմետր երկարությամբ նոր երկաթուղային մայրուղի: Վերագործարկման դեպքում այն կդառնա Հայաստանի հաղորդակցական անկախության ողնաշար՝ ապահովելով կապ Սև ծովից մինչև Պարսից ծոց առանց թուրք–ադրբեջանական տարածքների, խթանելով Գեղարքունիք–Վայոց ձոր–Սյունիք տնտեսական գոտիների ինտեգրացումը և ուժեղացնելով սուվերենության պաշտպանությունը:

«Արևելք–Արևմուտք» հաղորդակցական հայեցակարգով առաջարկվող ծրագրով կվերահիմաստավորվի Հայաստանի պատմական դերը որպես Սև և Կասպից ծովերի, Միջերկրականի և Պարսից ծոցի միջև կապող տարածք՝ չնվազեցնելով պետական վերահսկողությունը և բացառելով միջանցքային կամ արտաքին կառավարման տարրերը: Այն կկառուցվի Բաքու–Ղազախ–Իջևան–Հրազդան–Երևան–Երասխ–Նախիջևան–Կարս հիմնական ուղղության վրա՝ ներառելով նաև Իջևան–Դիլիջան–Վանաձոր–Գյումրի–Կարս օղակը:

Այս երեք նախագծերը կձևավորեն Հայաստանի «իրական խաչմերուկը», որտեղ Հյուսիս–Հարավ ուղղահայաց առանցքը և Արևելք–Արևմուտք հորիզոնական կապերը կապահովեն փոխլրացնող հաղորդակցական համակարգ: Այս ինտեգրված ցանցը Հայաստանի տնտեսությանը կտա հուսալիություն և դիվերսիֆիկացիա, կնվազեցնի արտաքին կախվածությունը մեկ ուղղությունից, հնարավորություն կընձեռի ներքին արդյունաբերությունը կապել արտաքին նավահանգիստների և

շուկաների հետ, իսկ քաղաքական առումով կվերացնի արտաքին ճնշումների համար լծակ դառնալու վտանգը: Նշյալ երեք հաղորդակցական առանցքները միասին կձևավորեն Հայաստանի հաղորդակցական աշխարհագրությունը՝ որպես ինքնուրույն, բազմավեկտոր, տնտեսական և քաղաքականորեն հավասարակշռված պետություն, որը ոչ թե սպասում է արտաքին նախագծերի իրականացմանը, այլ կառուցում է իր սեփական ենթակառուցվածքային ապագան՝ պետական շահերից ելնելով:

Արդյունաբերական գոտիներ՝ որպես խաչմերուկային մոդելի սիրտ

Հայաստանի արդյունաբերական նոր մոդելի կենտրոնում ***արդյունաբերական գոտիներն*** են՝ որպես արտադրության, տեխնոլոգիայի և արտահանման ամբողջական էկոհամակարգեր: Դրանք միավորում են ինժեներական, լոգիստիկ, էներգետիկ և կառավարման ենթակառուցվածքներ, բարձրացնում արտադրողականությունը, ավելացված արժեքը և արտահանման մասնաբաժինը:

Գոտիների նպատակն է նվազեցնել ծախսերը, ապահովել տեղական ավելացված արժեքի աճ, զարգացնել տեխնոլոգիական շղթաները և արտադրությունը ներգրավել գլոբալ շուկաներում: Տեղաբաշխումն իրականացվում է շուկաների մատչելիության, ժամանակ–կիլոմետր քարտեզագրության, հմտությունների խտության և մատակարարման շղթաների վերակազմավորման հիման վրա՝ նվազեցնելով շուկայի ռիսկերը:

Գոտիների տարածքային մասնագիտացումը հիմնված է մարզերի առավելությունների վրա. Սյունիք՝ խորը վերամշակում և էներգետիկ սարքավորումներ, Վայոց ձոր և Գեղարքունիք՝ ագրոտեխնոլոգիա և սննդարդյունաբերություն, Արարատ և Արմավիր՝ գյուղմթերքի վերամշակում և արտահանման լոգիստիկա, Կոտայք և Երևան՝ էլեկտրոնիկա, բարձր տեխնոլոգիաներ, չիպերի նախագծում, Լոռի և Շիրակ՝ մեքենաշինություն, ինժեներիա, «խելացի» շինանյութեր, կանաչ քիմիա, Տավուշ՝ սենսորային տեխնոլոգիաներ և բնապահպանական լուծումներ:

Ներդրումային հիմքում գործում է «Հայաստանի արդյունաբերական գոտիների հիմնադրամը», որտեղ պետությունը ներդրում է կատարում հողով ու ենթակառուցվածքով, պահպանում է «ոսկե բաժնեմաս», իսկ կապիտալը

ձևավորվում է արտերկրի, այդ թվում Սփյուռքի, տեղական ու ինստիտուցիոնալ ներդրողների մասնակցությամբ: Գործում է ակտիվների տարանջատում, բաց ռեգիստր և կարգավորիչ կայունության սկզբունք: Եկամուտը ձևավորվում է տարածքային տուրքերից, ծառայություններից, վարձակալությունից և, անհրաժեշտության դեպքում, կոնցեսիոն մեխանիզմներից: Հիմնադրամի նպատակային եկամտաբերությունը 8–12 տոկոս է, իսկ կապիտալի լծակային ազդեցությունը՝ պետական յուրաքանչյուր 1 դրամի դիմաց առնվազն 4–6 դրամ մասնավոր ներդրում:

Արդյունաբերական գոտիների համակարգը վերափոխում է տնտեսությունը՝ դարձնելով այն բարձրարժեք արտադրության, գիտահեն լուծումների, ինտեգրված ենթակառուցվածքների և արտահանման վրա հիմնված մոդել, որտեղ ներդրողին առաջարկվում է կանխատեսելի, արագ և վստահելի միջավայր, իսկ արդյունքը դառնում է չափելի և երկարաժամկետ:

ՀՀ տնտեսության զարգացման հեռանկարային ոլորտների զարգացման քաղաքականություն

Արտահանումն ունի բազմապատկիչ ազդեցություն՝ բարձրացնելով զբաղվածությունը, եկամուտներն ու ներդրումային գրավչությունը: Կայուն արտահանման աճը ձևավորում է վստահելի միջավայր, ներգրավում կապիտալ, տեխնոլոգիա և գործընկերային կապեր, ինչը պահանջում է կանխատեսելի օրենսդրություն, պաշտպանված գույքային իրավունքներ, զարգացած լոգիստիկա և ֆինանսական ծառայություններ:

Հեռանկարային ուղղություններից են ռազմարդյունաբերությունը, ՏՏ-ն, տիեզերական և արբանյակային տեխնոլոգիաները, կենսատեխնոլոգիան ու ֆինտեխը՝ որպես բարձր աճ ունեցող, երկակի նշանակության և մեծ արտահանման ներուժ ունեցող ոլորտներ: Դրանք պահանջում են հետազոտական բազա, ինժեներական կարողություններ, կիբերանվտանգություն և միջազգային համագործակցություն:

Արժեթղթերի շուկայի խթանման համակցված բարեփոխում

Հայաստանի նոր տնտեսական մոդելը պահանջում է կապիտալի և կորպորատիվ կառավարման ամբողջական վերաձևում, քանի որ գործող

համակարգը չի ապահովում ներդրումային վստահություն և չի ձևավորում իրական արժեթղթերի շուկա: Այս տրամաբանությամբ՝ կվերացվի «բաց» և «փակ» բաժնետիրական ընկերությունների բաժանումը, կլինի միասնական ձև, որտեղ բաժնետոմսերի ազատ շրջանառությունը և հաշվետվողականությունը պարտադիր են:

Արժեթղթերի շուկայի զարգացման առանցքային բաղադրիչը կդառնա վերաիմաստավորված բաժնետիրական ընկերությունների համար շահութահարկի նոր մոդելը, որի շրջանակում շահույթի հարկումը տեղի է ունենում միայն բաժնետերերին շահույթի բաշխման պահին: Չբաշխված շահույթը, որն ուղղվում է ներդրումներին, տեխնոլոգիաներին կամ արտադրական ընդլայնմանը, հարկման ենթակա չէ, ինչը խթանում է կապիտալի կուտակումը և արտադրական հնարավորությունների աճը: ՍՊԸ–ների համար կպահպանվի շահութահարկի ներկայիս համակարգը՝ ներդնելով պրոգրեսիվ շահույթի հարկման դրույքաչափեր: Ներդրված պրոգրեսիվ հարկման համակարգը նաև կապահովումի սոցիալական արդարության և եկամուտների համաչափ բաշխման հանրային ընկալումներ և երաշխիքներ:

Բարեփոխման համակցված ազդեցությունը կունենա չորս ուղղություն. ա) կձևավորվի կապիտալի իրական շուկա, բ) կխթանվեն ներդրումները, գ) կամրապնդվի ֆիսկալ վերահսկողությունը և դ) կբարձրանա հանրային վստահությունը տնտեսական համակարգի նկատմամբ: Արդյունքում՝ արժեթղթերի շուկան կդառնա նոր տնտեսական մոդելի հիմնասյուն՝ ապահովելով պաշտպանված ներդրող, ազատ կապիտալ և թափանցիկ կառավարման դաշտ, որը կուժեղացնի Հայաստանի տնտեսական ինստիտուտները և երկարաժամկետ դիմակայունությունը:

Տնտեսություն, գիտություն, նորարարություն և մարդկային կապիտալ

Փոքր տնտեսություն ունեցող երկրի պայմաններում մրցունակությունը ձևավորվում է գիտության, հետազոտության, նորարարության, ինժեներական լուծումների և տեխնոլոգիական արտադրության հիմքով: Այդ իսկ պատճառով գիտահեն տնտեսության կառուցումը կդառնա ոչ թե ոլորտային ծրագիր, այլ

Հայաստանի ազգային անվտանգության, տնտեսական վերափոխման և միջազգային մրցունակության առանցքային հիմք:

Այս նոր տրամաբանության մեջ կվերակառուցվի գիտության ֆինանսավորման ամբողջ մոդելը՝ հիմնարար գիտությունից դեպի կիրառական հետազոտություն ինդուստրիալ փորձարկում և շուկային պատրաստ տեխնոլոգիա հաջորդականությամբ: Գիտության ֆինանսավորումը այլևս չի դիտարկվի որպես ծրագրային մնացորդ, այլ՝ որպես տնտեսության կառուցվածքային փոփոխության հիմնական հենասյուն:

Նյութագիտությունը, ճշգրիտ մեքենաշինությունը, միկրոէլեկտրոնիկան, ներստեղադրված համակարգերը, կենսատեխնոլոգիան, դեղագործությունը, գյուղատնտեսական գիտությունը , էներգետիկ նորարարությունները և պաշտպանական տեխնոլոգիաները կդառնան գիտական ու տեխնոլոգիական քաղաքականության առանցքային ուղղություններ:

Կիրականացնենք նաև **արտահոսքի կանխման քաղաքականությունն**՝ երիտասարդ գիտնականների ֆինանսավորմամբ, «առաջին տեխնոլոգիական աշխատատեղ» ծրագրերով, ստարտափ էկոհամակարգի խթանմամբ և բարձր տեխնոլոգիական աշխատանքի հարկային խթաններով:

Գիտություն, տեխնոլոգիա և սփյուռքի ներուժ

Հայաստանը, ունենալով փոքր, բայց տաղանդավոր տնտեսություն, ունի եզակի հնարավորություն՝ համադրելու ներքին գիտելիքների հիմքը և սփյուռքահայ մասնագետների համաշխարհային փորձը՝ երկրի տեխնոլոգիական և տնտեսական ինքնիշխանությունը ամուր հենքի վրա դնելու համար: Այս համատեքստում կարևոր է ստեղծել գիտելիքի և նորարարության միասնական համակարգ, որտեղ համախմբված կլինեն հայ գիտնականները, ինժեներները և սփյուռքի փորձագետները՝ իրենց գիտելիքն ու փորձը ուղղելով այնպիսի ոլորտների, որոնք արդեն հաստատվել են որպես ռազմավարական՝ նյութագիտություն, ճշգրիտ մեքենաշինություն, միկրոէլեկտրոնիկա, կենսատեխնոլոգիա, դեղագործություն, գյուղատնտեսական և էներգետիկ նորարարություններ և ռազմարդյունաբերություն:

Այս մոտեցումն ապահովում է, որ գիտությունն այլևս դիտարկվի ոչ միայն որպես ուսումնասիրությունների շարք, այլ տնտեսության կառուցվածքային փոփոխության հիմնական հենասյուն:

Նոր հարկային համակարգի ռազմավարական լուծում

Նոր հարկային համակարգը կլինի Հայաստանի տնտեսական վերափոխման կենտրոնական հիմքում՝ նպաստելով սպառման վրա հիմնված մոդելից արտադրություն, ներդրումներ և արտահանում անցմանը: Նախքան նոր հարկային համակարգի գործարկումը կվերականգնենք մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող հարկային ռեժիմը: Կվերացնենք հավասար հարկման անարդար մոտեցումը. քիչ եկամուտը կհարկվի քիչ, շատ եկամուտը՝ շատ:

Հարկային քաղաքականության նոր սկզբունքները կկենտրոնանան հարկային բեռի կառուցվածքային փոփոխության վրա՝ անցում անելով անուղղակի հարկերից դեպի ուղղակի հարկեր, սպառման հարկումից դեպի արտադրության ու արժեքի ստեղծման հարկում: Այս մոտեցումը կնվազեցնի տնտեսության աղավաղումները, կմեծացնի արտադրողականությունը, կբարձրացնի մրցունակությունը՝ ուղղելով հարկային բեռը դեպի այն հարկման օբյեկտները, որոնք չեն խոչընդոտում ներդրումային և արտադրական որոշումների իրագործմանը: Ըստ էության, հարկային համակարգը կսկսի խրախուսել ոչ թե ծախսը, այլ ստեղծված արժեքը:

Հարկային բեռի թեթևացումը արտադրության և արտահանման ոլորտներում կդառնա տնտեսական քաղաքականության առանցքային տարր: Արդյունաբերական գոտիների համար կսահմանվի ֆիքսված տուրք՝ զբաղեցրած տարածքի (մակերեսի) դիմաց մոդելը, որը կազատի արտադրական շղթան բազմաշերտ հարկումից և կնվազեցնի ռիսկերը:

Սոցիալական արդարության պահպանումը կդառնա հարկային քաղաքականության պարտադիր բաղադրիչ:

Հարկային դիզայնի առանցքային փոփոխություններից մեկը կլինի ԱԱՀ-ի աստիճանական դուրսբերումը և դրա փոխարինումը վաճառքի հարկով: ԱԱՀ-ը, լինելով բարդ կառուցվածքով անուղղակի հարկ, ամբողջությամբ բարդվում է սպառողի վրա, բարձրացնում է գների մակարդակը, նվազեցնում է ներքին պահանջարկը, թանկացնում է տեղական արտադրությունը և խաթարում է

արտահանման մրցունակությունը: Բացի այդ, բազմաշերտ հաշվետվական համակարգը խթանում է ստվերայնությունը, որը փոքր տնտեսության համար դառնում է լուրջ խոչընդոտ:

Վաճառքի հարկը, լինելով պարզ, թափանցիկ և վարչարարական առումով էժան, դառնում է առավել նպատակահարմար: Այն չի ազդում արտադրական շղթայի միջանկյալ փուլերի վրա և չի բարձրացնում ինքնարժեքը, ինչը լրացուցիչ խթանում է արտադրությունը և սպառումը: ԱԱՀ-ից հրաժարման փուլային ռազմավարությունը թույլ է տալիս անցում կատարել առանց բյուջետային ցնցումների՝ պահպանելով պետական եկամուտների կայունությունը:

Հանքարդյունաբերության ռոյալթիի նոր համակարգը կկառուցվի համաշխարհային գների հետ ավտոմատ կապի հիմքի վրա՝ ռոյալթիի դինամիկ սանդղակով և շահութաբերության նկատմամբ զգայուն տարրերով՝ ապահովելով ռեսուրսների արդար և արդյունավետ օգտագործում: Տեխնոլոգիական ոլորտում կներդրվեն *Արժեքի ստեղծման վրա հիմնված հարկման հիմունքներ*, որոնք ուղղված կլինի ինժեներական և բարձր տեխնոլոգիական աշխատանքի խթանմանը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ժամանակակից տնտեսությունում արժեքի մեծ մասը ստեղծվում է գիտելիքի և մարդկային կապիտալի միջոցով:

Ներդրումային խթանները՝ կիրառական հետազոտությունների 30–50 տոկոս վերադարձ, արագացված ամորտիզացիա և ներդրումային վարկեր, կնվազեցնեն նախագծերի ռիսկայնությունը և կբարձրացնեն արտադրողականությունը: Տարածքային հարկային խթանները կնպաստեն սահմանամերձ ու սոցիալ-տնտեսական առումով թույլ բնակավայրերի ակտիվացմանը:

Ինստիտուցիոնալ մակարդակում հարկային բնագավառում վարչարարություն իրականացնող մարմինը կվերածվի կանխատեսման ու ռիսկերի կառավարման մարմնի, հարկային վարչարարությունը կդառնա ամբողջությամբ թվայնացված և ավտոմատացված, իսկ պարտադիր հայտարարագրումը կապահովի ֆիսկալ թափանցիկություն և հարկային բարոյականություն:

Ի վերջո, նոր հարկային համակարգը կդառնա տնտեսության, ինստիտուտների և սոցիալական արդարության համակցված վերափոխման հենասյուն՝ ապահովելով աճ, արդարություն, ներդրումային դիվերսիֆիկացիա, ֆիսկալ կայունություն և

մրցունակ արտադրական տնտեսություն: Սա է խելացի պետության հայեցակարգի հենասյուներից մեկը:

Թվային արժույթի հայեցակարգ

Թվային դրամի հայեցակարգի նպատակն է ստեղծել ազգային արժույթի նոր՝ թվային ձև,որը դառնալով կանխիկ և անկանխիկ դրամին հավասարազոր և 1:1 հարաբերակցությամբ փոխարկելի երրորդ ձև, կդառնա ֆինանսական համակարգի, հանրային կառավարման և տնտեսության թվայնացման գլխավոր շարժիչը: :

Հիմնական նպատակը պետական վճարումների ամբողջական թափանցիկությունն ու վերահսկելիությունն է: Պետական գնումներում թվային դրամը կդառնա միակ վճարամիջոցը՝ ապահովելով գործարքների հետագծելիությունը, պայմանական և նպատակային վճարումների կատարումը և կոռուպցիոն ռիսկերի չեզոքացումը: Հետագայում բիզնես միջավայրում և պետական–մասնավոր հաշվարկներում նույնպես նախատեսվում է աստիճանական անցում թվային դրամով վճարումների:

Թվային դրամի թողարկումն ու կառավարման հարթակը կիրականացնի Կենտրոնական բանկը՝ ապահովելով ենթակառուցվածքի անվտանգությունը, գործարքների վերահսկելիությունը և բարձր մատչելիությունը:

Թվային դրամը կդառնա Հայաստանի ֆինանսական, կառավարական և տնտեսական թվայնացման հիմնական հենասյունը՝ բարձրացնելով թափանցիկությունը, նվազեցնելով ծախսերը, ուժեղացնելով պետական վերահսկողությունը և ամրապնդելով երկրի ֆինանսական ու տեխնոլոգիական ինքնիշխանությունը:

9. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության զարգացման հիմքում պետք է դրվեն՝

1. Գիտելիքը և կրթությունը՝ ներդնելով մշակման նորագույն տեխնոլոգիաներ՝ չանտեսելով, միաժամանակ, հայրենական գյուղատնտեսական գիտության ձեռքբերումները:

2. Ժամանակակից տեխնիկական միջոցներով համալրված տարածաշրջանային կամ համայնքային տեխնոպարկերի ստեղծումը, որը

գյուղացիական տնտեսությունների համար հնարավորություն կստեղծի մատչելի գներով օգտվել ժամանակակից տեխնիկական միջոցներից, իսկ համայնքների համար լրացուցիչ եկամուտի աղբյուր կհանդիսանա:

3. Գյուղատնտեսական գործունեության խթանման նպատակային ծրագրերի իրականացումը ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության բնագավառներում: Այս նպատակով հաջորդող 2 տարիների ընթացքում իրականացվելու է հողային ֆոնդերի ամբողջական վերահաշվառում՝ հողերի կենսաքիմիական կազմի ճշգրտմամբ: Չմշակվող հողատարածքներն ու լքված շինությունները կտրամադրենք զարգացման ծրագրեր ներկայացնողներին: Կստեղծենք գյուղատնտեսական արտադրանքի մթերման և ագրոխորհրդատվության կենտրոններ: Կզարգացնենք ապահովագրությունը, այդ թվում՝ անասունների անկմամբ պայմանավորված վնասը և բերքի ոչնչացումը փոխհատուցելով:

4. Գյուղատնտեսական արտադրանքի իրացման արդարացի համակարգերի ներդրումը, այդ թվում՝ յուրաքանչյուր տարի նվազագույն գնային երաշխիքների սահմանմամբ: Պետությունը կսուբսիդավորի գյուղացիական արտադրանքի վաճառքի գների տարբերությունը, եթե շուկայում գինը իջնի, հստակ մշակված կառուցակարգերով կխրախուսի գյուղացիական միությունների ձևավորումը, որոնք միասին կվաճառեն բերքը՝ առանց միջնորդների, պետությունը կձևավորի պահանջարկ ամեն հաջորդ տարվա համար՝ նախանշելով ապրանքի հավանական գինը: Կապահովենք օտարերկրյա շուկաների հասանելիություն, գյուղմթերքի բրենդավորում և լոգիստիկ ուղեկցում:

10. Ընտանիք և սոցիալական պաշտպանություն

Հայաստանի ապագան հիմնված է ամուր և բազմազավակ ընտանիքների, աշխատանքի հնարավորության և արդար ու հոգատար սոցիալական համակարգի վրա, որտեղ յուրաքանչյուր քաղաքացու համար կա հասանելի ու արդյունավետ աջակցություն կյանքի բոլոր փուլերում:

Մենք խելացի քաղաքականությամբ կխթանենք ծնելիությունը, որը մեր երկրի գլխավոր մարտահրավերն է՝ կվերանայենք եկամտային հարկի համակարգը, բազմազավակ ընտանիքների համար կգործի հարկման առանձնահատուկ ռեժիմ՝

ընտանիքի համախառն եկամտի հաշվարկի և ընտանիքի անդամների համախառն եկամտի հիմքով: Յուրաքանչյուր երեխայի համար կլինի ընդլայնված չհարկվող շեմ՝ հատկապես երկրորդ և երրորդ երեխաներից սկսած: Բազմազավակ ընտանիքին, չորրորդ երեխայից սկսած, կտրամադրենք անվճար բնակարան մարզերում:

Բոլոր բնակավայրերի երեխաների համար նախադպրոցական խնամքն ու կրթությունը կդառնան հասանելի՝ առավելապես անվճար, իսկ որոշ հավելյալ ծառայություններ՝ հնարավորինս մատչելի:

Մասնավոր գործատուները կօգտվեն մանկապարտեզ կամ նախակրթարան հիմնելու պետական համաֆինանսավորման ծրագրերից՝ իրենց աշխատակիցների ընտանիքներին օգնելու համար: Այս ծրագիրը կներդրվի հատուկ նպատակով, որպեսզի ապահովենք կանանց առավել արագ ինտեգրումն աշխատաշուկայում մայրանալուց հետո:

Երիտասարդ ընտանիքներին կտրամադրվի բնակարանային աջակցություն, **մատչելի հիփոթեքի և եկամտային հարկի հետ վերադարձի** շնորհիվ:

Մինչև **2030 թ.** նախատեսում ենք ներդնել **գործազրկության պետական ապահովագրություն**, որի շնորհիվ մարդը աշխատանքը **կորցնելու** դեպքում մինչեւ վեց ամիս եկամտի ժամանակավոր հատուցում կստանա:

Զբաղվածության աջակցման ծրագրերը **հատուկ աջակցության կարիք ունեցող** բնակչության համար միտված կլինեն տնտեսական ակտիվացմանը՝ կապելով այն քաղաքացիների շարունակական կրթության և ինքնաբավ կենսագործունեություն վարելու հնարավորությունների ընդլայնման հետ:

Նպաստներից կախվածությունը խոցելի խմբերի շրջանում **նվազեցնելու ենք առնվազն 25%-ով: Ընտանիքին ուղղված նպաստների** համակարգը գործելու է պրոֆեսիոնալ սոցիալական աշխատանքի, զբաղվածության ծրագրերի և նպատակային աջակցության համադրության հիմքով՝ վերականգնելու ընտանիքի կայուն ինքնաբավ գործունեություն վարելու կարողությունը և նվազեցնելու կախվածությունը նպաստներից: Աղքատությունը կրճատելու ենք առնվազն 40%-ով 10 տարվա ընթացքում՝ աղքատությունից դուրս բերելով ընտանիքները ոչ թե միայն նպաստների, այլ զբաղվածության, շարունակական կրթության,

ինքնազբաղվածության և սոցիալական բարձր նշանակություն ունեցող ձեռնարկատիրության միջոցով:

11. Աշխատաշուկայի զարգացման նոր մոտեցում

Աշխատանք ունենալը մարդու հիմնարար իրավունքն է: Ավելացնելու ենք նվազագույն աշխատավարձը եւ շեշտադրելու ենք աշխատանքային պայմանների բարելավումը սոցիալական, առողջապահական և կրթական ոլորտների աշխատողների համար, տրամադրելու ենք հատուկ երաշխիքներ՝ արձակուրդի և հոգեբանական վերականգնման համար: Ամրապնդելու ենք երիտասարդների կրթության կապը աշխատաշուկայի հետ՝ **ավագ դպրոցից սկսած,** միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (քոլեջ) և բուհերում՝ մասնավոր ընկերությունների և գործատուների համար մասնակցության հնարավորությունների ընդլայնմամբ, որպեսզի նրանք մասնակցություն ունենան երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և կարիերիայի գործում՝ փոխհատուցելով կրթական ծախսերը, փորձնակության և աշխատանքի վերցնելով նրանց, մանավանդ **երիտասարդ կանանց:**

Նախատեսում ենք թերի օգտագործված աշխատուժի քանակի էական (մինչև 30%) կրճատում՝ **հիմնականում երիտասարդների և կանանց աշխատաշուկայում ակտիվացնելու** շնորհիվ, իսկ խոցելի խավերի շրջանում՝ աղքատության կրճատում՝ տնտեսական ակտիվացման և նպաստներից կախվածության նվազեցման ճանապարհով:

Աշխատանքի շուկա մտնելու համար մարզերում ստեղծելու ենք կյանքի **բոլոր փուլերում** հեռավար կամ առկա մասնագիտական ուսուցման կենտրոններ մասնավոր ընկերությունների հետ համատեղ:

Մայրության արձակուրդից վերադարձող կանանց տրամադրելու ենք երեխայի **խնամքի** երաշխիքներ: Նրանք կօգտվեն աշխատանք փնտրելու թվային գործիքներից և առցանց վերապատրաստումից՝ երկրորդ մասնագիտություն ստանալու համար: Նույն մոտեցումներով խթանելու ենք **ավագ սերնդի զբաղվածությունը՝** նրանց տրամադրելով կրթության մատչելի հնարավորություններ և խրախուսելով գործատուներին:

Մարզերում ստեղծելու ենք շարունակական վերապատրաստման կենտրոններ՝ ապահովելով 10,000-ից ավելի քաղաքացու մուտքը բարձր եկամուտ ապահովող ոլորտներ,

Խթանելու ենք անապահով և հատուկ կարիքներ ունեցող մարդկանց **ինքնազբաղվածությունը՝** տրամադրելով ձեռնարկատիրության մատչելի կրթական ծրագրեր բոլոր քաղաքներում, ինչպես նաև կիրառելով **միկրոբիզնեսների համաֆինանսավորման գործիքներ:** Այդ նպատակով պետական - մասնավոր համագործակցության մեխանիզմներով ստեղծվելու են **բիզնես ինկուբատորներ մարզերում՝** որպեսզի Արցախից տեղահանված խոցելի բնակչությունը, տեղացի անապահով աշխատունակ մարդիկ և ավագ սերնդի ներկայացուցիչները կրթվեն և դառնան փոքր ձեռնարկատերեր:

Հատուկ ուշադրություն ենք դարձնելու սոցիալական մեծ ազդեցություն ունեցող բիզնեսների ստեղծմանն ու ընդլայնմանը, որոնք խթանում են համայնքներում խոցելի խմբերի տնտեսական ակտիվացմանն ու սոցիալական ինտեգրմանը:

12. Ավագ սերունդ և աջակցության կարիք ունեցող խմբեր

Նախատեսում ենք կենսաթոշակների բարձրացում և ինդեքսավորում՝ կենսաապահովման մինիմալ զամբյուղին համարժեք: Սրա համար կան հատուկ տնտեսական լուծումներ:

Խրախուսելու ենք համայնքի մասնակցությամբ՝ համայնքային սոցիալական կենտրոնների ստեղծումը, որոնք կազմակերպելու են ժամանցային, շարունակական կրթության և խնամքի ծառայություններ ավագ սերնդի համար, հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման և խոցելի ընտանիքների երեխաների հոգեսոցիալական աջակցության համար: Տնային խնամքի և համայնքային սոցիալական ծառայությունների հասանելիություն ապահովելու են **տարեցների առնվազն 70%-ի համար: Պետություն մասնավոր համագործակցության արդյունքում հանրային բոլոր ծառայությունները 100%-ով հասանելի են լինելու հաշմանդամություն ունեցող ցանկացած անձի համար:**

Ընդլայնելու ենք տնային խնամքի անվճար կամ համավճարով ծառայությունները՝ դրանք դարձնելով որակյալ և հնարավորինս ներգրավելով մասնավոր ընկերություններին՝ գրավիչ պայմաններով: Տրամադրելու ենք **թվային վաուչերներ** խոցելի խմբերին ծառայություններ և **աջակցող միջոցներ** ձեռքբերելու համար, այդ թվում մասնավոր ընկերություններից, որպեսզի ապահովենք առավելագույն որակ և հասանելիություն:

Մեծացնելու ենք **սոցիալական բնակարանային ֆոնդը** անապահով մարդկանց համար, այդ թվում մատչելի վարձավճարով՝ պետություն-մասնավոր գործընկերություններ ստեղծելով, դարձնելով սոցիալական բնակարանաշինությունը բաց և պրոֆեսիոնալ կառավարվող պետական գործառույթ:

Մենք կառուցում ենք **սոցիալական** պետություն, որտեղ ընտանիք կազմելը, երեխաներ ունենալը, աշխատելը և տարիք առնելը նշանակում է արժանապատիվ կյանք, ոչ թե մշտական պայքար գոյատևման համար:

Այս հարցում մենք ունենք 3 գերագույն արժեք և նպատակ՝ **արդար աշխատանք բոլորի համար, ապագա ունեցող ընտանիք և պաշտպանված քաղաքացի:** Մենք մերժում ենք այն կառավարման ձևը, որտեղ սոցիալական քաղաքականությունը մարդկանց պահում է աղքատության, անորոշության և նպաստներից կախվածության մեջ:

13. Որակյալ և հասանելի առողջապահական համակարգ

Մենք ունենք հստակ նպատակ՝ Հայաստանը դարձնել տարածաշրջանում առողջ ու երկար կյանք ապահովող երկիր, որտեղ հիվանդությունը չի վերածվում աղքատության, իսկ բուժօգնությունը ոչ թե ճոխություն է կամ բեռ, այլ հասանելի միջոց կյանքի որակը բարելավելու համար: ՀՀ քաղաքացիների համար Հայաստանի ամբողջ տարածքում կապահովենք համընդհանուր անվճար բժշկական օգնություն և սպասարկում՝ ծառայությունների համապարփակ փաթեթով:

Այդ նպատակին հասնելու ենք 4 ուղղություններով:

Կանխարգելում և վաղ հայտնաբերում

Մինչև 2030 թ. ոչ վարակիչ հիվանդությունների **առնվազն 30%-ը կբացահայտվի վաղ փուլում**: Սահմանամերձ և մարզային համայնքներում կգործեն շարժական բժշկական թիմեր և լաբորատորիաներ, իսկ առաջնային բուժօգնությունը կվերափոխվի՝ դարձնելով այն վստահելի և արդյունավետ համակարգի հիմք:

Մատչելի դեղեր և ծառայություններ ամբողջ երկրում

Դեղերի շուկան կկառավարվի թափանցիկ և վերահսկվող մեխանիզմներով՝ նվազեցնելով գները և չարաշահումները: Մարզերում առողջապահական ծառայությունների **իրական հասանելիությունը կբարձրանա մինչև 100%**, իսկ անապահով խմբերի բուժօգնության պետական ծախսերը կավելանան **առնվազն 50%-ով**:

Արդար և հաշվետու ապահովագրական համակարգ

Պետական առողջության ապահովագրության ֆոնդը կդառնա թափանցիկ, մրցունակ և արձագանքող համակարգ՝ մասնավոր ապահովագրողների մասնակցությամբ: Այն այլևս չի լինի քողարկված հարկ կամ բեռ փոքր բիզնեսի և չաշխատողների համար, այլ՝ իրական պաշտպանություն քաղաքացու համար:

Բուժաշխատողը՝ համակարգի առանցք

Բուժաշխատողները չեն զբաղվելու վարչարարությամբ: Կվերանայվի բուժաշխատողների վարձատրությունն ու վերապատրաստումը՝ արտահոսքը կանխելու համար: Կներդրվի հեռավար բժշկություն և հեռավար ուսուցում, իսկ բուժհաստատությունների կառավարումը կստանդարտացվի՝ ապահովելով որակ, մատչելիություն և ֆինանսական թափանցիկություն: Կվերանայվի բուժաշխատողների վարձատրության և վերապատրաստումների համակարգը: Սա ամենակարեւոր քայլերից է՝ կանխելու համար բարձր որակավորում ունեցող բուժաշխատողների արտահոսքը մարզերից դեպի Երևան կամ արտերկիր:

Կստանձնենք պատասխանատվություն հզորացնելու այն բոլոր հնարավոր մեխանիզմները, որոնք կօգնեն **հիվանդությունների վաղ հայտնաբերմանն ու կանխարգելմանը, ապացուցահեն բժշկության զարգացմանն ու նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը**:

Ոչ վարակիչ հիվանդությունների պատճառով և վաղաժամ մահացության հետևանքով **Հայաստանը ամեն տարի կորցնում է շուրջ 300 միլիարդ ՀՀ դրամ**[2], ինչն ահռելի տնտեսական կորուստ է պատճառում երկրին: Սա գումար է, որը կարող է ուղղվել հիվանդությոնների վաղ հայտնաբերմանն ու կյանքի որակի բարձրացմանը, կրթությանն ու նոր աշխատատեղերի կամ տեխնոլոգիական զարգացմանը:

Մենք քաջ գիտակցում ենք ներկայիս համաշխարհային մարտահրավերները: Հայաստանում կյանքի տևողությունը վերջին քսանամյակում երկարել է[3] սակայն ինչպես և ամենուր երկարակեցությունը ուղեկցվում է հիվանդություններով: Ծերացող բնակչությունը մեծացնում է ճնշումը համակարգի վրա, բայց տարեցների առողջապահական ծառայությունների որակն ու մատչելիությունը հետ են մնում ընդունված միջազգային չափանիշներից: Սա ահազանգող փաստ է, հաշվի առնելով, որ այսօր բնակչության 11 տոկոսը 65 և բարձր տարիք ունի, իսկ մինչև 2050 թվականը այդ թիվը կհասնի գրեթե 24 տոկոսի: Սա նշանակում է՝ ավելի շատ տարեցներ կունենան բազմաթիվ քրոնիկ հիվանդություններ, իսկ աշխատող երիտասարդների թիվը կնվազի:

Ուստի, մենք հիմնովին վերանայելու ենք գործող առողջապահական համակարգը, որը վերածվել է պետական բիզնես ծրագրի և տարբերվում է իր ծախսատարությամբ և ծայրահեղ անարդյունավետությամբ:

Նոր առողջապահական համակարգը կանցնի հիվանդությունների բուժումից դեպի առողջության պահպանում: Առաջնային բուժօգնության օղակի հզորացումը, դեղորայքի մատչելիությունն ու ռեսուրսների նպատակային օգտագործումը նույնպես կդառնան մեր կարևորագույն խնդիրները, որոնք պահանջում են լուրջ ուսումնասիրություն և գործնական քայլեր:

Մարզերի բնակիչները չպետք է ստիպված լինեն որակյալ բուժօգնության համար հասնել Երեւան: Խրախուսելու ենք առողջապահական ծառայությունների ընդլայնումն ու ներդրումը մարզերում մասնավոր կառույցների կողմից, ինչպես նաև

[2] Հայաստանի հանրային ծախսերի ուսումնասիրություն, *Համաշխարհային բանկ,* էջ 151 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://openknowledge.worldbank.org/entities/publication/db65c41d-4858-40cc-873e-b42d52a40f79):

[3] Միջինում 72-ից դեպի 76 տարեկան, 2000-2019թթ. տե՛ս նույն տեղում, էջ 15:

գիտահետազոտական գործունեությունը՝ ՀՀ առողջապահական համակարգը նորարար և գիտահեն դարձնելու նպատակով:

Պետք է ապահովել առողջապահության ոլորտի և ընդհանրապես, համակարգի նկատմամբ վստահությունն ու թափանցիկությունը: Այս նպատակով կստանդարտացվեն բուժհաստատությունների կառավարման համակարգերը և բուժման գործընթացի կազմակերպումը, կստեղծենք համակարգեր, որոնք թույլ կտան վերահսկել բուժսպասարկման որակը ու արդյունավետ օգտագործել ներդրվող ֆինանսական միջոցները, դարձնելով այն մատչելի և հասանելի բոլորի համար:

14. Մշակույթ և ազգային ինքնություն

Մշակույթը մեր համար ոչ միայն ժառանգություն է, այլ ազգային ինքնության, կրթության, միջազգային հեղինակության և տնտեսական ներուժի հիմնասյուն: Այսօր Հայաստանում մշակութային ոլորտը ունի հարուստ բովանդակություն, սակայն թերի կառավարման, ցածր ֆինանսավորման արդյունավետության և ժամանակակից ենթակառուցվածքների պակասի պատճառով չի իրացնում իր ամբողջ ներուժը:

Մենք կանցնենք պահպանողական մոտեցումից դեպի ստեղծարար, մրցունակ և արտահանելի մշակութային համակարգ:

Մշակույթի հասանելիություն և մասնակցություն

Այսօր մշակութային կյանքին կանոնավոր մասնակցող բնակչության մասնաբաժինը սահմանափակ է, հատկապես մարզերում: Մինչև 2030 թ. նպատակ ունենք մշակութային ծրագրերին մասնակցող բնակչության մասնաբաժինը հասցնել առնվազն 40%-ի: Մարզերում կստեղծվեն մշակութային կենտրոններ և բազմաֆունկցիոնալ ստեղծարար հարթակներ:

Թանգարանների, թատրոնների և համերգասրահների հասանելիությունը կբարձրացվի՝ թվայնացման և շրջիկ ծրագրերի միջոցով:

Մշակութային ժառանգության պահպանում և արդիականացում

Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը հաճախ գտնվում է ոչ բավարար պահպանության պայմաններում: Մինչև 2030 թ. նպատակ ունենք

վերականգնել և պահպանել վտանգված հուշարձանների առնվազն 70%-ը, և մեծ թափով սկսել չուսումնասիրված կամ կոնսերվացված հնավայրերի հետազոտումը և դրանց՝ հանրության համար մատչելի դարձնելը:

Կստեղծվի մշակութային ժառանգության ամբողջական թվային արխիվ:

Կներդրվեն կառավարման նոր մեխանիզմներ՝ մասնավոր հատվածի ներգրավմամբ:

Կինոն, երաժշտությունը, դիզայնը, խաղարտադրությունը և այլ ոլորտներ կարող են դառնալ տնտեսական աճի աղբյուր: Կստեղծվեն ֆինանսավորման ֆոնդեր և հարկային խթաններ ստեղծարար բիզնեսների համար: Պետությունը կաջակցի հայկական բովանդակության արտահանմանը դեպի միջազգային շուկաներ:

Մշակութային կրթություն և երիտասարդություն

Մշակութային կրթությունը այսօր ամբողջությամբ ինտեգրված չէ կրթական համակարգում: Մինչև 2028 թ. արվեստի և մշակույթի կրթությունը կուժեղացվի դպրոցներում՝ որպես պարտադիր բաղադրիչ:

Կարդիականացվեն և հասանելի կդառնան արվեստի դպրոցները: Կստեղծվեն երիտասարդ ստեղծագործողների համար կրթական և ֆինանսական ծրագրեր:

Մշակույթ և միջազգային դիրքավորում

Հայաստանի մշակույթը կարող է դառնալ արտաքին քաղաքականության կարևոր գործիք: Հայաստանը կկազմակերպի և կմասնակցի խոշոր միջազգային մշակութային նախագծերի: Կստեղծվի միասնական ռազմավարություն՝ հայկական մշակույթի միջազգային առաջխաղացման համար: Կխթանվի մշակութային տուրիզմը՝ որպես տնտեսական ուղղություն:

Կառավարում և թափանցիկություն

Մշակույթի ֆինանսավորումը կդառնա արդյունքահեն՝ հստակ չափելի ցուցանիշներով: Կստեղծվի բաց տվյալների համակարգ՝ մշակութային ծրագրերի և ֆինանսավորման վերաբերյալ: Պետություն–մասնավոր համագործակցությունը կդառնա ոլորտի զարգացման հիմնական մեխանիզմ:

Մենք կառուցում ենք մշակութային համակարգ, որտեղ ժառանգությունը պահպանվում է, ստեղծարարությունը խրախուսվում է, իսկ մշակույթը դառնում է զարգացման և մրցունակության շարժիչ ուժ:

Հայաստանը պետք է ներկայանա աշխարհին ոչ միայն իր անցյալով, այլ նաև ժամանակակից ստեղծարար ներուժով:

15. Հայաստան – Սփյուռք համագործակցության վերաիմաստավորում

Հայաստանը համահայկական ինքնության, կառավարման և ինստիտուցիոնալ կայունության կենտրոնն է, իսկ Սփյուռքը՝ գիտելիքի, կապիտալի և մարդկային ներուժի ռազմավարական գործընկերը: Հայաստան–Սփյուռք հարաբերությունները հիմնված են ոչ թե միակողմանի աջակցության, այլ համատեղ պատասխանատվության, համատեղ կառավարման և համատեղ արժեք ստեղծելու վրա:

Համահայկական միասնություն և գործընկերային հարաբերություններ: Մենք մերժում ենք պառակտումը և հայության մասնատումը /բաժանումները բոլոր դրսևորումներով: Մենք տեսնում ենք, որ **Սփյուռքը** ներգրավված է Հայաստանի զարգացման գործընթացներում որպես լիիրավ գործընկեր՝ ազգային ինքնության, պետականության և երկարաժամկետ զարգացման ամրապնդման համար: Բարեգործական տրամաբանությունը լրացվում է համատեղ սեփականության, համատեղ ծրագրերի և փոխշահավետ համագործակցության մոդելով:

Բաց կառավարում սփյուռքի մասնակցությամբ: Մենք հանձնառու կերպով կստեղծենք ինստիտուցիոնալ հարթակներ, որոնց միջոցով Սփյուռքի կառույցներն ու անհատները մասնակցում են ռազմավարական ծրագրերի քննարկմանն ու իրականացմանը:

Գիտելիքի, մարդկային կապիտալի և նորարարության համատեղ զարգացում: Հայաստանի և Սփյուռքի գիտական, բժշկական, տեխնոլոգիական և ինժեներական ներուժը միավորվելու է՝ ուղղված տնտեսության, բարձր տեխնոլոգիաների, ռազմարդյունաբերության և առողջապահության զարգացմանը:

Կստեղծվեն համատեղ հետազոտական լաբորատորիաներ, որտեղ կհամադրվեն Հայաստանի և Սփյուռքի գիտելիքն ու տեխնոլոգիաները:

Մինչև 2028 թվականը կստեղծվեն **առնվազն 10 համատեղ հետազոտական լաբորատորիաներ կամ ծրագրային հարթակներ** սփյուռքահայ գիտնականների և ինժեներների մասնակցությամբ: Նպատակն է ապահովել տարեկան **առնվազն 300 մասնագետի** կարճաժամկետ կամ համատեղ ներգրավում Հայաստանի գիտական և տեխնոլոգիական նախագծերում՝ գիտելիքի փոխանցումը դարձնելով ինստիտուցիոնալ և շարունակական գործընթաց:

Այս ռազմավարական ուղղությունների իրականացման համար առաջարկվում է **երեք կենտրոնական ծրագիր**. Նախ, ստեղծել **«Գիտելիքի համահայկական ցանց»՝** համատեղ հետազոտական լաբորատորիաներով, որտեղ սփյուռքի գիտնականները, ինժեներները և ստարտափ մասնագետները կաշխատեն Հայաստանի գիտական և տեխնոլոգիական թիմերի հետ՝ արագացնելու նորարարական լուծումների մշակումը, կիրառությունը և շուկայական պատրաստի տեխնոլոգիաների արտադրությունը:

Երկրորդ, ներդնել խթանիչ քաղաքականություն՝ բարձր տեխնոլոգիական նորարարությունների և գիտահեն արտադրության աջակցման համար, ներառյալ հարկային արտոնություններ, դրամաշնորհային համակարգեր և սփյուռքի մասնագետների կարճաժամկետ առաքելություններ՝ փորձի փոխանցման, կրթության ինտեգրման և ոլորտի գլոբալ մրցունակության ապահովման համար

Երրորդ, մինչև 2030 թվականը կստեղծվի վերադարձի միասնական հարթակ, որը Սփյուռքի ներկայացուցիչներին և վերադարձող ընտանիքներին կապահովի նախապես հասանելի լեզվական ուսուցմամբ, բնակարանի և աշխատանքի որոնմամբ ու հիմնական ծառայությունների ինտեգրված մատչելիությամբ՝ ապահովելով Հայաստան տեղափոխվելուց հետո արագ և սահուն սոցիալ-տնտեսական ինտեգրում:

16. Շրջակա միջավայր և բնական ռեսուրսների պաշտպանություն

Մենք շրջակա միջավայրը դիտարկում ենք ոչ թե որպես առանձին ոլորտ, այլ որպես ազգային անվտանգության, հանրային առողջության և տնտեսական կայունության հիմնասյուն: Հայաստանի բնական ռեսուրսների անխնա

շահագործումը, ջրային պաշարների վատ կառավարումը, օդի աղտոտվածությունը և թափոնների կուտակումը դարձել են համակարգային խնդիրներ, որոնք պահանջում են ոչ թե հատվածական, այլ համապարփակ և գիտահեն լուծումներ:

Մենք կանցնենք բնական ռեսուրսների սպառումից դեպի պատասխանատու կառավարում՝ ապահովելով ներկա և ապագա սերունդների իրավունքները:

Մեր քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

Բնական ռեսուրսների արդար և վերահսկելի կառավարում

Կվերանայվի հանքարդյունաբերության ոլորտը՝ ներդնելով խիստ բնապահպանական ստանդարտներ և հանրային վերահսկողություն: Բացառվելու է բնության անդառնալի վնաս պատճառող գործունեությունը: Կկիրառվի «աղտոտողը վճարում է» սկզբունքը՝ ապահովելով շրջակա միջավայրի վերականգնման իրական մեխանիզմներ:

Ջրային ռեսուրսների պաշտպանություն և արդյունավետ կառավարում

Հայաստանի ջրային պաշարները կհռչակվեն ռազմավարական նշանակության ռեսուրս: Կներդրվեն ժամանակակից մոնիթորինգի և կառավարման համակարգեր՝ կանխելու ջրի կորուստը, աղտոտումը և չարաշահումները: Կապահովվի խմելու ջրի հասանելիություն և ոռոգման արդիական համակարգերի ներդրում՝ գյուղատնտեսության կայուն զարգացման համար:

Մաքուր օդ և առողջ միջավայր

Կնվազեցվի օդի աղտոտվածությունը՝ խստացնելով վերահսկողությունը արդյունաբերության, հանքարդյունաբերության և տրանսպորտի նկատմամբ: Կխթանվի էլեկտրական տրանսպորտի և վերականգնվող էներգիայի կիրառումը՝ հատկապես քաղաքային միջավայրում:

Թափոնների կառավարում և վերամշակում

Կստեղծվի թափոնների կառավարման ամբողջական համակարգ՝ աղբի տեսակավորումից մինչև վերամշակում: Կփակվեն չկարգավորված աղբավայրերը և կստեղծվեն ժամանակակից վերամշակման կենտրոններ՝ ներգրավելով մասնավոր հատվածը: Մինչև 2030 թվականը նպատակ ունենք զգալիորեն կրճատել

աղբավայրերի ծավալը: Կներդրվի էլեկրական մեքենաների մարտկոցների թափոնների կառավարման և ուտիլիզացիայի համակարգը:

Կենսաբազմազանության և անտառների պաշտպանություն

Կընդլայնվեն հատուկ պահպանվող տարածքները, կուժեղացվի անտառների վերականգնման պետական ծրագիրը: Անտառահատումները կդրվեն խիստ վերահսկողության տակ՝ կանխելով ապօրինի գործունեությունը: Հայաստանը պետք է վերականգնի իր բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը:

Կանաչ տնտեսություն և կլիմայական քաղաքականություն

Մենք կխթանենք կանաչ տեխնոլոգիաները և էներգիայի վերականգնվող աղբյուրների զարգացումը՝ արևային, քամու և այլ: Տնտեսական աճը պետք է համատեղելի լինի շրջակա միջավայրի պահպանության հետ: Հայաստանը կդառնա տարածաշրջանում կանաչ զարգացման օրինակ:

Մենք կառուցում ենք պետություն, որտեղ տնտեսական առաջընթացը չի իրականացվում բնության հաշվին, այլ ներդաշնակ է նրա հետ: Մաքուր օդը, անվտանգ ջուրը և պահպանված բնությունը ոչ թե շքեղություն են, այլ յուրաքանչյուր քաղաքացու հիմնարար իրավունք:

17. Սպորտ և առողջ հասարակություն

Սպորտը մեզ համար ոչ միայն առողջ ապրելակերպի բաղադրիչ է, այլ ազգային ինքնության, միջազգային ճանաչման և երիտասարդության զարգացման գործիք: Այսօր Հայաստանում սպորտը ունի հաջողություններ առանձին անհատների մակարդակում, սակայն համակարգային զարգացման բացակայությունը սահմանափակում է ներուժը:

Մենք կանցնենք պատահական հաջողություններից դեպի համակարգային արդյունք՝ ստեղծելով լայն մասնակցություն և բարձր մրցունակություն ապահովող սպորտային միջավայր:

Մանկապատանեկան և զանգվածային սպորտ

Հայաստանում սպորտով կանոնավոր զբաղվող բնակչության մասնաբաժինը գնահատվում է մոտ 15–20%: Մինչև 2030 թ. նպատակ ունենք այն հասցնել առնվազն 35–40%-ի:

Բոլոր համայնքներում կստեղծվեն հասանելի սպորտային ենթակառուցվածքներ (բաց խաղադաշտեր, մարզադահլիճներ):

Հանրակրթական դպրոցներում կավելացվի ֆիզկուլտուրայի ժամերի արդյունավետությունը՝ ներմուծելով սպորտային ընտրովի ծրագրեր:

Մինչև 2030 թ. առնվազն 70% դպրոցներ կունենան վերանորոգված կամ նոր կառուցված մարզական պայմաններ:

Օլիմպիական մարզաձևերի զարգացում՝ մեդալների համակարգային աճ

Հայաստանի միջազգային հաջողությունները հիմնականում գալիս են օլիմպիական անհատական մարզաձևերից (ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ):

Մինչև 2032 թ. նպատակ ունենք կրկնապատկել օլիմպիական մեդալների միջին ցուցանիշը:

Կստեղծվեն մասնագիտացված օլիմպիական պատրաստման կենտրոններ առնվազն 5 առաջնահերթ մարզաձևերում:

Մարզիչների վարձատրությունը կբարձրացվի՝ կապելով արդյունքների և պատրաստված մարզիկների թվի հետ: Կմշակվի մարզիչների վերապատրաստման կայուն համակարգ: Պետական աջակցությամբ մարզչական և սպորտային կառավարման մասնագետները կստանան կրթություն ոլորտի միջազգային լավագույն համալսարաններում:

Կներդրվեն սպորտային գիտության (սնունդ, վերականգնում, տվյալների վերլուծություն) ժամանակակից մեթոդներ:

Ֆուտբոլ՝ ազգային առաջնահերթություն

Ֆուտբոլը Հայաստանում ամենամեծ զանգվածայնություն ունեցող մարզաձևն է, սակայն միջազգային արդյունքները չեն համապատասխանում այդ ներուժին:

Մինչև 2030 թ. նպատակ ունենք ապահովել Հայաստանի հավաքականի կայուն մասնակցություն եվրոպական և միջազգային մրցաշարերի ընտրական փուլերի մրցունակ պայքարին:

Մանկապատանեկան ֆուտբոլում ներգրավվածների թիվը կավելացվի առնվազն 2 անգամ:

Կկառուցվեն և կվերանորոգվեն առնվազն 10 ժամանակակից ֆուտբոլային դաշտեր մարզերում:

Կստեղծվի ակադեմիաների միասնական համակարգ՝ եվրոպական ստանդարտներով մարզչական կրթությամբ:

Բարձրագույն լիգայի ակումբների ֆինանսական և կառավարման թափանցիկությունը կդառնա պարտադիր:

Սպորտային ենթակառուցվածքներ և մարզեր

Այսօր սպորտային ենթակառուցվածքները կենտրոնացած են հիմնականում Երևանում: Մինչև 2030 թ. մարզերում կստեղծվեն առնվազն 10 բազմաֆունկցիոնալ մարզական կենտրոններ: Համայնքների առնվազն 80%-ը կունենա նվազագույն սպորտային ենթակառուցվածք: Կխթանվի մասնավոր ներդրումների ներգրավումը սպորտային օբյեկտների կառուցման մեջ՝ միաժամանակ խրախուսելով բիզնեսի մասնակցությունը սպորտի զարգացման մեջ որպես սոցիալական պատասխանատվության միջոց:

Սպորտային կառավարում և թափանցիկություն

Կներդրվի սպորտի ֆինանսավորման արդյունքահեն մոդել՝ հստակ չափելի ցուցանիշներով: Ֆեդերացիաների գործունեությունը կդառնա հաշվետու՝ պետական աջակցության դիմաց: Կստեղծվի միասնական թվային հարթակ՝ մարզիկների, մրցումների և արդյունքների տվյալներով

Սպորտ և առողջ ապրելակերպ

Սպորտը կդառնա հանրային առողջության քաղաքականության մաս:

Մինչև 2030 թ. նպատակ ունենք նվազեցնել ֆիզիկական պասիվության մակարդակը առնվազն 20%-ով: Կխթանվեն կորպորատիվ և համայնքային

սպորտային ծրագրերը: Սպորտային մասնակցությունը կդառնա հասանելի բոլոր սոցիալական խմբերի համար: Մենք կառուցում ենք համակարգ, որտեղ սպորտը դառնում է ոչ միայն մեդալների աղբյուր, այլ առողջ, ակտիվ և մրցունակ հասարակության հիմք:

Հայաստանի հաջողությունը պետք է որոշվի ոչ միայն առանձին չեմպիոններով, այլ լայն սպորտային մշակույթով՝ դպրոցից մինչև ազգային հավաքական: